

ԱՂՋԻԿ ՏԱՐՈՆԻ ԶՐՈՒՅՑԸ XII ԳԱՐԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՈՒՄ

Հայ ժողովրդական դյուցազնավեպ «Սասնա ծռերը» հայերեն գրի է առնվել իր կազմավորումից շատ ուշ՝ միայն անցյալ դարի 70-ական թթ., մեծանուն բանասեր Դ. Սրվանձտյանցի ջանքերով¹։ Ժամանակի ընթացքում պրպտումներն ի հայտ են բերել օտար լեզուներով ավելի հին հիշատակություններ, ինչպես, օրինակ, XVI դարին վերաբերող փոքրիկ հատվածներ², որոնք, համենայն դեպս, մի քանի հարյուր տարով ավելի հին են, քան հայերենը։

Բարեբախտաբար, արաբական մատենագրության էջերում պահպանվել է ավելի հին մի գրառում՝ XII դարից, որի վրա ուշագրություն են դարձրել դեռ անցյալ դարում։ Դա IX դարի արաբ պատմիչ Վակիդին վերագրվող մի բնագիր է։

Արաբ պատմիչ Աբու Աբգալիա Մուհամմեդ իրն Օմար Վակիդին ծնվել է Հիջրի 130 (747) թ. Մադինայում։ Նա մահացել է 207 (823) թ.։ Արաբ մատենագիրների վկայությամբ Վակիդին բաղմամբիվ աշխատություններ է գրել, սակայն նրա աշխատությունների մեծ մասը կորած է։ Նրանից իր ժամանակին օգտվել են բազում արաբ պատմիչներ, ինչպես, օրինակ, Թաբարին։ Նա ունեցել է «Ասորիքի նվաճումներ», «Իրաքի նվաճումներ», «Եգիպտոսի նվաճումներ» և այլ աշխատություններ, որոնք այժմ կորած են։ Այն, ինչ այդ անուններով այժմ հասել է մեզ, ուշ շրջանի գործեր են և սոսկ վերագրվում են Վակիդին։ Այդ գործերը համարվում են մեծ մասամբ XII դարի գրվածքներ և դրանց հեղինակին պայմանականորեն կոչում են Կեղծ-Վակիդի։

Կեղծ-Վակիդիի ձեռագրերը առաջին անգամ գրավեցին գերմանացի արևելագետների ուշագրությունը։ Գյոտինգենի բանասերներից Հ. էվալդը (1803—1875), որը հետաքրքրվել է հին արևելյան լեզուներով, նույն քաղաքի գրադարանում գտնվող արաբերեն ձեռագրից 1827 թ. հրատարակել է Միջագետքի նվաճմանը վերաբերող արաբերեն մի բնագիր⁴։ Մի քանի տարի անց՝ 1847 թ., գերմանացի արևելագետ Բ. Դ. Նիբուրը Կոպենհագենում գտնվող արաբերեն ձեռագրից հրատարակեց Միջագետքի և Հայաստանի նվաճմանը⁵ վերաբերող բնագրի գերմաներեն թարգմանությունը։ Այստեղ ընդգրկված է աղջիկ Տարոնի վեպի արաբական պատումը։ 1854 թ. անգլիացի արևելագետ Ն. Լիզը Կալկաթայում, այլ ձեռագրից, հրատարակեց Ասորիքի նվաճմանը վերաբերող մի հատված, որը դարձյալ Վակիդին է վերագրվում։

Կեղծ-Վակիդիի արաբերեն բնագիրը Միջագետքի և Ասորիքի նվաճման մասին հրատարակվել է մի քանի անգամ Կահիրեում՝ Հիջրի 1306 (1888—1889), 1316 (1898—1899), 1321 (1903—1904) տարիներին։

Հստ այս արաբական պատումի (Աղջիկ Տարոնի վեպ) Միջագետքի Հոռոմ թագավոր Շահ-րիադը արարների հարձակման դեմ օգնություն է խնդրում իսլաթի (Հայաստանի) թագավոր

¹ Գ. Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ, կամ Մհերի դուռ, Պոլիս, 1874։

² R. Gulbenkian et H. Berberian, La légende de David de Sassoun d'après deux voyageurs portugais du XVI^e siècle, „Revue des Etudes Arméniennes“, nouv. série, VIII, Paris, 1971, էջ 175—188։

³ C. Brockelmann, Geschichte der arabischen Literatur, Weimar, 1898, էջ 135—137։

⁴ G. H. A. Ewald, Libri Vakedii de Mesopotamiae expugnatae historia, Göttingen, 1827։

⁵ „Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien von Mohammed ben Omar el-Wakedi“. Aus dem arabischen übersetzt und mit Anmerkungen begleitet von B. G. Niebuhr, Hamburg, 1847։

Յուսթինոսից, Սասունի թագավոր Սանասարից, Արզնի և Բաղնշի տեր Սարուանդից, Նրանք զորքեր են ուղարկում: Խլաթի թագավորի գեղանի դուստր աղջիկ Տարոնը (Թարուն), թեև տարիներ առաջ մենամարտում հաղթած և մերժած է եղել Սասունի թագավորի որդի Մուշին, բայց արշավանքի ժամանակ սիրահարվում է նրան: Սակայն Տարոնին առևանգում է իր հորեղբորորդին՝ Բակուրը (Սարուանդի որդին), որն անցնում է արարների կողմը, ընդունում մահմեդականությունը⁶ և ապա ամուսնանում նույնպես մահմեդականություն ընդունած Տարոնի հետ: Ըստ արաբական պատմի աղջիկ Տարոնը, խաբելով իր հորը, թե իրր առերես է մահմեդականություն ընդունել, ի վերջո սպանում է նրան և ամբողջ երկիրը ընդունում է մահմեդականությունը:

Հայագիտության մեջ առաջինն այս բնագրի վրա ուղագրություն է դարձրել Վ. Տոմաշևկը և նշումներ է կատարել Սասունի մասին իր գրած հայտնի մենագրության մեջ, որը թարգմանվել է հայերեն⁷: Վ. Տոմաշևկը նկատել է նաև Սասնա ծոերին վերաբերող առանձին հիշատակություններ XVI դարի պարսկալեզու քուրդ պատմիչ Շերեֆ խանի պատմության մեջ:

Մ. Արեղյանը այստեղ հիշված անունները մեկնաբանում է հայ մատենագրության տվյալներով⁸: Սասունի (Սանասինա) թագավոր Սանասարի անունը, բնականաբար, հայկական վեպից է գալիս, Մուշը պետք է լինի Մուշեղ, իսկ Տարոնը տեղանունից դարձել է անձնանուն: Սարուանդը Մովսես Խորենացու հիշած Սիմ Զրուանն է, «Սիմը որ և Զրուան առժամանակ բնակվել է Տարոնի դաշտում և նրա անունով կոչվել է Սասնու Սիմ լեռ»⁹:

Մ. Արեղյանը նմանություն է տեսնում Խորենացու Պատմության մեջ Տիգրանուհու և Սասնա ծոերի Խանդութի (հենվելով Ղ. Ինճիճյանի մի վկայության վրա)¹⁰ ու արաբական պատմի Տարոնի միջև: Տիգրանուհու ամուսնանալը թշնամի Աժդահակի հետ նման է Խլաթի և Հայաստանի թշնամի Բակուրի հետ Տարոնի ամուսնանալուն, ապա եզրակացնում է, որ նմանություններ կան նաև Խանդութի և Տարոնի միջև: Խանդութի համար Սանասարի որդի Դավիթն է կովի դուրս գալիս, իսկ Տարոնի համար՝ Սանասարի որդի Մուշը: Մ. Արեղյանը գտնում է նաև, որ «Տարոնի պատերազմի» հերոս, Տարոնի և Սասնա տեր Մուշեղը աղջիկ Տարոնի վեպում դարձել է Սանասարի որդի Մուշ: Ժամանակի ընթացքում Սանասարի որդի Մուշեղը (Մուշ) փոխարինվում է Սանասարի որդի Դավիթով, ինչպես Մսրա Մելիքը փոխարինել է Բաղդադի խալիֆային:

Սակայն նմանություններ կան նաև Սասնա ծոերի Ծովինարի ու արաբական պատմի Տարոնի միջև: Երկուսի (հայկական Սասնա ծոերի և արաբական պատմի) մեջ էլ հանդես է գալիս հայոց թագավորը, որն իշխում էր Վանա լճի շուրջը և ուներ գեղանի դուստր: Տեսնելով Հայաստանի նեղ դրությունը հարկ պահանջող արաբների անվերջ հարձակումների հետե-

⁶ Արաբների հետ Բակուրի համագործակցությունը գուցե արձագանքը լինի արաբական առաջին արշավանքների ժամանակ նվաճողների կողմն անցած Վարդիկ Մուկացու (Ս ե բ ե ո ս, Պատմություն, Երևան, 1939, էջ 110) և Սահու Անձևացու («Պատմություն Տարոնոյ», Երևան, 1941, էջ 286) արաբների կողմն անցնելու փաստի:

⁷ Վ. Տոմաշևկ. Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, Վիեննա, 1896, էջ 16, 20—24:

⁸ Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 386:

⁹ Կեղծ-Վակիդիի մոտ Հայաստանի նվաճմանը նախորդող հատվածում, երբ խոսվում է Միջագետքի նվաճման մասին, հիշվում են հայ զորավարներ, որոնք մասնակցել են Շահ-րիադ թագավորի կռիվներին ընդդեմ արաբների: Հիշվում է, օրինակ, հայազգի Ռուբիլը (روبييل الارمني), աե'ս Ewald, աշգ. աշխ., էջ 19—20), հայազգի Վարդեկը (Wartabek der Armonier): Կահիրեի տպագրության մեջ (էջ 61) այս անունը գրված է նաև Վարդիկ (وَرْدِيك) և Վարնիկ (وَرْنِيك) ձևերով: Ըստ Արեղյանի, սա կարող է լինել Վարդապատիկ (նշվ. աշխ., էջ 387): Հիշվում է հայազգի Արջուկը, որը համարվում է ղյուցագուն: Սա, հավանաբար, Մատթեոս Ուռհայեցու մոտ հիշված Արջուկ իշխանը պետք է լինի, որը կամենում էր նվաճել Եդեսիան, սակայն Փիլարտոս Վարաժնունին սպանեց նրան (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 323): Հիշված է նաև Միջագետքի Շահրիադ թագավորի հայ վեպիրը:

¹⁰ Ղ. Ինճիճյան, Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, Վենետիկ, 1806, էջ 121:

վանքով, թագավորի աղջիկը դիմում է հնարամտության: Մովինարը և Տարոնը երկուսն էլ դի-
ջում են կատարում արարենքին: Թե՛ Մովինարը, թե՛ Տարոնը կարողանում են ի վերջո Հա-
յաստանը փրկել: Նեղության ժամանակ հայոց Գագիկ թագավորը ժողով է հրավիրում: Նույն
ձևով հլաթի թագավորը ժողովի է հրավիրում պատրիկներին: Երկու հերոսուհիներն էլ՝ նախ
գնում են արաբների մոտ և որոշ ժամանակ անց ետ են գալիս և երկուսն էլ հայոց թագավորի
մահվանից հետո իշխում են:

Դեռևս անցյալ դարի վերջում, ինչպես ասացինք, Վ. Տոմաշևկը նկատել էր, որ Շարաֆ-
Նամեում խոսվում է Վակիդիի հաղորդած աղջիկ Տարոնի վեպի մասին: XVI դարի քուրդ
պատմիչ Շարաֆ խանը գրում է. «Վակիդին Նաուֆալ իբն Աբդալլահից լսելով պատմում է, որ
Օմար խալիֆայի ժամանակ Իյադ իբն Ղանմը Հիջրայի քսանյոթ թվին (648) հրամանատար
նշանակվեց Դիար Բաքրը և Հայաստանը նվաճելու համար: Այդ ժամանակ հլաթի (Ախլաթ)
կառավարին էր Յուսթինուս (يوسطينوس) անունով մի անհավատ, Բաղեշի (Բաղիս)
կառավարին էր Սարուանդ (سرواند) որդի Յունիսի (يونس) պատրիկը¹¹, իսկ Մուշի
ու Սասունի տերը (թագավոր) Սանասար (ساناسر) անունով մի անհավատ էր: Նրանց
առաջնորդը և հրամանատարն էր հլաթի կառավարիչ Յուսթինուսը: Սա իր Տարոն (Թարուն
(طارون) կոչված դստերը իրեն գահաժառանգ դարձրեց:

«Յուսթուհ ալ-Բիլադ» (երկրների նվաճում) [գրքում] հիշվում է, թե՛ որ կամքն այն էր,
որ նրան ամուսնացնի հորեղբոր՝ Բաղեշի կառավարիչ Սարուանդի որդու՝ Բակուրի (Բազուր
بخور)¹² հետ: Սակայն դուստրը ուժեղ սեր ուներ Սանասարի որդի պատանի Մուշի հանդեպ,

որը գեղեցիկ արտաքին ուներ և զուգված էր շնորհալիության ու բարության պաճուճանքով:
Այն ժամանակ, երբ անհավատ կառավարիչները իրենց որդիներին օգնության ուղարկեցին
Ամիդի կառավարիչ Միրիամ իբն Դարաբին, Տարոնը ևս իր հոր փոխարեն այդ արշավանքին
մասնակցելու հրաման ստացավ: Երբ նա պատահաբար հանդիպեց Սանասարի որդի Մուշին,
իր տիրական ձեռքից անմիջապես բաց թողեց ինքնատիրապետման սանձերը, զաղտնաբար
Մուշի հետ համաձայնելով, բանակատեղիից փախավ, Իյադ իբն Ղանմի ծառայության մեջ
մտավ և մահմեդականությունն ընդունելու արժանացավ: Տարոնին միացրին Մուշի հետ ամուս-
նական կապով: Ի վերջո Տարոնը նախօրոք պայմանավորվելով Իյադի մերձավորների հետ,
հոր մոտ փախավ [ասելով], թե՛ Մուշն ինձ բռնի մահմեդական դարձրեց, իսկ [այժմ] կըր-
կին վերադարձել եմ իմ կրոնին: Ապա առիթը գտնելով սպանեց իր հորը և հլաթը հաշտու-
թյան [պայմանագրով] մահմեդական զորքերին հանձնեց:

Բաղեշի կառավարիչ Սարուանդը նույնպես [իր կողմից] Յուկաննայի միջոցով պայմա-
նավորվեց տալ հարյուր հազար ոսկեղրամ (դինար), հազար հակ կերպասեղեն և ֆռանկ (իֆ-
ռանջ՝ եվրոպական) դիպակ, հինգ հարյուր արաբական (تازی) ձի և հարյուր տեղական
(شیری) ձի¹³:

Շարաֆ-Նամեն շեղվում է Վակիդիի պատմածից ասելով, որ Տարոնը (Թարուն) ամուս-
նացավ Մուշի հետ: Այս պարագայում տեղին է հիշեցնել Մ. Աբեդյանի սրամիտ եզրակա-
ցությունը, որին նա հանգել էր առանց ծանոթ լինելու Շարաֆ-Նամեի սույն հատվածին: Նա

11 Ե. Վասիլևան, որ հրատարակել է այդ բնագրի ռուսերեն թարգմանությունը, հավա-
նարար արարեցին Ե. Բ. Բադր (պատրիկ, քրիստոնյա իշխան) կարգալով
عبدالله, բատրաք, այսինքն պատրիարք և ապա այն հայկականացնելով, գրում է կաթողիկոս
(Шараф хан Бидлис, Шараф-Наме, М., 1967, էջ 386):

12 Բնագրում՝ Բազուր (بخور) է գրված, որը ֆրանսերենի թարգմանիչ Շարմուան կար-
դում է Պոզոս, սակայն արաբերենում ր և զ նույն ձևով են գրվում մի կետի տարբերությամբ:
Վակիդիի լեռնազրադյան ձեռագրում այս անունը գրված է ր վերջավորությամբ: Ուստի այն
պետք է կարգալ Բազուր այսինքն Բակուր (Cheref Nameh ou fastes de la nation
kourde, par Cheref-uddine, trad. par F. B. Charmoy, t. II. premiere partie, St. Peter-
bourg, 1873, էջ 206):

13 „Scheref-Nameh ou histoire des kourdes“, par Sheref prince de Bitlis, publ.
par V. Veliaminov Zarnov, I, St. Peterbourg, 1860, էջ 340—341.

գրում է. «Եվ իրերի բնական ընթացքը պահանջում է, որ զոռով իսլամության դարձած և իր ատելի մարդու ձեռով բռնությամբ առևանգված ու ամուսնացած Տարոնը, որ ծածուկ ետ է դառնում իր երկիրը, պիտի ամուսնանար իր սիրած մարդու՝ Սասնա Մուշի հետ»¹⁴։ Հետագայում է, որ Վակիդին իր շարադրանքի մեջ նշում է, որ Տարոնը, ետ գալով հոր մոտ, նորից բրիստոնեության դարձավ, սակայն անմիջապես աճապարում է ժխտել, ասելով, որ ուրիշներն այլ կերպ են պատմում։ Թե՛ Վակիդիի այս տեղեկությունը և թե՛ Մուշի հետ Տարոնի ամուսնանալու մասին Շարաֆ-Նամեի հաղորդածը վերջ ի վերջո պետք է այդ ժամանակ (XII դար) գոյություն ունեցող հայկական պատումի բաղկացուցիչ մասերը եղած լինեն։ Դժվար է ասել, թե Շարաֆ խանը որտեղից է վերցրել այս տեղեկությունը¹⁵։ Թեև այն վերագրվում է Ֆուտուհ ալ-Բիլադի հեղինակին (որը պետք է լինի IX դարի արաբ պատմիչ Բալազուրին), սակայն վերջինիս գրքում նման տեղեկություն չկա։ Գուցե Վակիդիի աշխատության այլ ձևագրում լինեն տարբերակներ, մանավանդ որ դրանք ցայժմ բավարար ուսումնասիրված չեն։

Վակիդիի տարբերակների գոյության¹⁶ մասին է վկայում նաև այն, որ Բաղեշի Սարուանդ իշխանը մի դեպքում արաբներին խոստանում է տալ հարյուր հազար դինար, հինգ հարյուր զրահ (رديّة) և հազար աղեղ (قوس), իսկ բոլոր Շարաֆ-Նամեի նա խոստանում էր տալ հարյուր հազար դինար, հազար հակ կերպասեղեն ու ֆրանկ (եվրոպական) դիպակ, հինգ հարյուր արաբական (տադի) ձի և հարյուր տեղական ձի։ Բացի դրամական գումարից (հարյուր հազար դինար), երկու ցուցակների մեջ ոչինչ չի կրկնվում։

Աղջիկ Տարոնի (Թարուն) վեպի կաղմավորման ժամանակը Մ. Արեղյանը դնում է X դարից ոչ ուշ (թեև զրի է առնված XII դարում), քանի որ այդ ժամանակ Դավիթն արդեն անցած պիտի լիներ հին Մուշի (Մուշեղի) տեղը։

Այսպիսով, մոտավորապես VII—X դդ. հայ ժողովրդական վեպի արձագանքները անցել են արաբներին և ստացել արաբական գունավորում, թեկուզև պահպանվել են, ինչպես տեսանք, հայկական տարրերակի որոշ գծեր։ Արաբներն իրենց կողմից ավելացրել են մի քանի պատմական անուններ, ինչպես, օրինակ, 640 թ. Հայաստան արշաված զորավար Իյադ իբն Ղանմը, Հալեպի կրոնափոխ եղած իշխան Յուլիանոսն, Ասորիքը նվաճած զորավար Խալիդ իբն ալ-Վալիդը և այլն։ Թեև վերջին երկուսը Հայաստանում չեն եղել, բայց արաբական վիպական զրույցը նրանց բերում է Հայաստան։ Բացի արաբական նվաճումների մասին ոչ պատմական տեղեկությունների հավելումից, արաբները փոխել են մանավանդ հայկական վեպի ոգին, տալով նրան արաբական, մահմեդական գունավորում։ Այսուհանդերձ, ինչպես տեսանք, արաբ պատմիչը իրեն մատնում է, տալով զրույցի երկու տարբերակ։ Նախ ասում է, թե Տարոնը, փախչելով հոր մոտ, վերադարձավ բրիստոնեական կրոնին, ասլա ժխտելով, հակառակն է պատմում։

Եթե մի կողմ թողնենք արաբական շերտը, նրա տակից կերևա հայկականը։ Նման դեպքում, Մ. Արեղյանի արտահայտությամբ, «մնում է այն, որ Տարոնը Բակուրին խաբելով, իբր թե՛ որը կսպանի և բերդերը կհանձնի արաբներին, փախչում է հոր մոտ, թագուհի դառնում, ամուսնանում Մուշի հետ։ Ասլա արաբները հարձակվում են Խալիթի վրա, հայերը հաղթում են կամ հաղթվում, և Տարոնն իր ամուսնու հետ Սասուն է գնում և բնակվում Մարութա լեռան վրա»¹⁷։

Այս թարգմանությունը կատարելիս օգտագործել ենք Կեղծ-Վակիդիի Կահիրեում Հիշրի 1321 (1903—1904) թ. հրատարակված արաբերեն ընագիրը¹⁸ (տողատակում նշում ենք տպ.

¹⁴ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 392։

¹⁵ Շարաֆ-Նամեում կա նաև Սասնա Դավիթի (Թավիթ) հիշատակումը (Ս. Հարությունյան, Հ. Բարթիկյան, Սասնա ծոերի արձագանքները Շարաֆ-Նամեում, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 90—104)։

¹⁶ Միաժամանակ աչքաթող չպետք է անել այն փաստը, որ հեղինակը այս հատվածը համարում է քաղված Ֆուտուհ ալ-Բիլադից, որի հեղինակն է Բալազուրին։ Բանն այն է, որ վերջինից մեղ հասել է նրա ընդարձակ (այժմ կորած) աշխատության սոսկ համառոտ խմբագրությունը և բացառված չէ, որ Շարաֆ խանը գուցե տեսած լիներ ընդարձակ խմբագրությունը։ Նման դեպքում մենք Սասնա ծոերի մասին նույնիսկ IX դարից ստույգ տեղեկություններ ունեցած կլինեինք։

¹⁷ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 392։

¹⁸ Ալ-Ուլա կիդի, Ֆուտուհ ալ-Շամ, Կահիրե, 1321 (1903—1904)։

ձևով), Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի В 605 (506 Ծ) (գրության ժամանակը՝ 1570 թ.) ձեռագիրը (Ձեռ.), որտեղ կա Հայաստանի նվաճմանը վերաբերող հատվածը: Ձեռագրի վերնագիրն է «Ֆուտուհ Բիլադ Դիարրաբը» (Դիար Բաբը երկրի նվաճումները) և պարունակում է Վերին Միջագետքի ու Հայաստանի նվաճման նկարագրությունը, փոքր գլուխներով, որոնք վերնագրեր ունեն (նույնն է նաև Կահիրեի տպագրությունը): Օգտագործել ենք նաև Սիրուրի կատարած գերմաներեն թարգմանությունը, որը գլուխներ կամ վերնագրեր չունի (այն տողատակում նշում ենք թրգմ. ձևով):

Արաբերեն բնագրից թարգմանելիս¹⁹ քաղել ենք այն նյութերը (էջ 52—99), որոնք կազմում են «Աղջիկ Տարոնի» (Թարունի) վեպը:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. Տեր-Ղևոնդյան

* * *

Ռաս ալ-Այն ամրոցի նվաճման մասին

Ասել է Վակիդին¹. Իյադ իբն Ղանմը չէր արգելում տեղի ժողովրդի դեմ կռվել, սակայն նա տեսավ, որ երկիրը իր մարդկանց կողմից նվաճվում է առանց կռվի: Նա այլևս չաճապարեց, քանզի նվաճված երկրում նրա թիկունքը ուժեղ էր և միաժամանակ գրեց Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահին նրանից լուր հարցնելով:

[Այդ ժամանակ] Շահրիադ² թագավորի նամակները հասան նահանգների տերերին և բոլորը պետք է զորք տային նրան օգնելու:

Նրա նամակը հասավ Խլաթի (Խիլաթ) տիրոջը, որն ուներ մի աղջիկ՝ արտակարգ գեղեցկության ու մեծ քաջության տեր և անունն էր Տարոն (Թարուն)³: Նրա նստավայրը գտնվում էր մի լեռան վրա, որը նրա անունով էր կոչվում: Ով նրա ձեռքն էր խնդրում [աղջիկը] համաձայնություն չէր տալիս, պահանջելով, որ ասպարեզում իրար հանդիպեն և եթե [տղան] հաղթեր, ապա ինքը կդառնար նրա կինը: Նա հաղթել էր իր բոլոր փեսացուներին: Նրա փեսացուների մեջ էր մի տղա, որի անունն էր Մուշ⁴, Սասունի (Սանասինա) լեռան տիրոջ՝ Սանասարի⁵ որդին: Սա Լկել էր Խլաթ իր հորից նրա հորը նվերներ բերելով, իսկ [աղջիկը] հայտնի պայմանը պահանջեց և ասպարեզում մենամարտելով հաղթեց նրան ու մազափունջը (խոպոպիքը) կտրեց:

Անցան օրեր ու գիշերներ: Եվ ահա երբ Շահրիադ թագավորը օգնություն խնդրեց թագավորներից, որոնց մեջ էր նաև Խլաթի տերը, սա շորս հաղար ձիավոր ուղարկեց, որոնց վրա հրամանատար էր կարգել իր աղջկան՝ Տարոնին և ասաց. Աղջիկս, քեզ նշանակեցի զորքի առաջնորդ և ուղղում եմ, որ

19 Թարգմանության մեջ մտցրել ենք Շարաֆ-Նամեի տված անունների ճիշտ ձևերը:

1 Ամեն անգամ, երբ հիշվում են Վակիդիի կամ արաբ զորավարների անունները, մաղթանքի խոսքեր են ասվում՝ «ալլահը ողորմի նրան ու գոհանա նրանից» և այլն: Նման արտահայտությունները զանց ենք առել թարգմանության մեջ:

2 Թրգմ. 4 Schahriadh ben Firus. Կա նաև Շահրիամ ձևը:

3 Տպ. Թարուն (طارون): Ձեռ. Թարուն (طارون), թրգմ. ավելացնում է՝ նա ապրում էր մի լեռան վրա, որը Ջարալ Մարդ էր կոչվում և ապա նրա անունով էլ կոչվեց Ջարալ Թարուն (էջ 54):

4 Տպ. Մուսի (موسی), թրգմ. Մուշ:

5 Տպ. Սալանթար (سلنطار). Թրգմ. 54 Selenter ben Herbit.

արաբներին ցույց տաս այն [արիությունը], որ ցույց էիր տալիս ասպետներին, որպեսզի քրիստոնյա ազգը քեզանից շնորհակալ լինի: Սասունի թագավորը նրա հետ օգնական զորք ուղարկեց հազար հոգուց բաղկացած, որոնց հրամանատարն էր իր որդին: Սա նրա (Տարոնի) հետ գնաց: Տղան արդեն մեծացել էր, գեղեցկացել և լուսնի նման հասել և այդ ժամանակ ոչ ոք չէր կարող գեղեցկությունամբ նրա հետ համեմատվել: Երբ Տարոնը նայեց նրա գեղեցկությանը և սիրուն դեմքին, սիրով լցվեց, իր սիրտը նրա սիրո ցանցի մեջ ընկավ և իր մարդկանց տարավ նրա մարդկանց հետ:

Ասել է Վակիգին՝ այս նվաճումների ժամանակ իմ տեսած ամենահետաքրքրական բաներից է հետևյալը. Այս աղջիկը ուներ մի հորեղբորորդի, որի անունն էր Բակուր (Բաղուր)⁶, որը սիրում էր նրան և չէր կարող [անտարբեր] լսել նրա անունը: Սա քաջ էր, ուժեղ և նրա ձեռքի տակ եղած բերդերն էին Հիրանը⁷, Մազանը, Աբրունը, Կիֆ ունդուրը, Բաղեշը (Բաղլիս) և Արզնը (Արզան) և եկել էր Շահրիադին օգնության երեք հազարով:

Իրբ նրա հորեղբոր աղջկա գործը անցավ Բաղեշի մոտով, նա հետաքրքրվեց նրանով, պատվեց նրան, նվիրեց ընծաներ ու թանկարժեք իրեր և ընկերացավ նրան մինչև անցան Հիսն Քեֆը, շարունակեցին ճանապարհը Մաուզանի կողմը և իջան մի բերդ, որը կոչվում էր Հատտախ, և գտնվում էր գետի ճամփի վրա: Հորեղբորորդին ուներ լրտեսներ, որոնք տեղեկացնում էին նրան (Տարոնին) վերաբերող լուրերը:

Երբ նա (Տարոնը) իջավ գետի մոտ, լուր ուղարկեց պատանի Մուշին, որին սիրում էր, ասելով. Գիտեցիր, որ անկեղծ սերը գալիս է միայն ծայրահեղ թշնամությունից հետո: Ես զղջացել եմ անցածի և քո նկատմամբ իմ վերաբերմունքի համար: Կարծում եմ, որ թշնամու դեմ կովից վերադառնալուց հետո դու իմ հորը լուր կուղարկես և ինձ կխնդրես նրանից: Բայց ես կամենում եմ, որ դու այս գիշեր իմ հորեղբորորդի Բակուրից թաքուն ինձ մոտ գաս, որպեսզի ինձ երգում տաս, թե լուր կուղարկես իմ հորը և ինձ նրանից կխնդրես: Երգվում եմ, որ քեզանից բացի ոչ ոքի չեմ ուզում: Եվ նվերներ ուղարկեց իր ծառաներից մեկի հետ, ինչպես նաև քաղցրեղեն: Այս նույնը նա ուղարկեց նաև իր հորեղբորորդուն և իրեն ընկերակցող ամեն մի իշխանի, որպեսզի նա (Բակուրը) իրեն չմեղադրի:

Այս ծառան իմացավ, թե ինչ էր կատարվել: Ծառան նրա հորեղբորորդուն իր ուսերի վրա էր մեծացրել, նրան շատ էր սիրում և ահա նրան հայտնեց նրա (աղջկա) զրույցը Սանասարի որդի պատանի Մուշի հետ, թե ինչպես ուղում էր նրա հետ գիշերը հանդիպել, որպեսզի նրան երգվի, թե նրանից բացի ուրիշի չի ուզում:

Բակուրը ոչ ոքի չհայտնեց այդ մասին և երբ գիշերը վրա հասավ, կանչեց իր զորքի մեծամեծներին և ասաց նրանց. Գիտեցեք, որ ես ձեզ վրա հրամանատար եմ կարգվել միայն այն բանի համար, որ Քրիստոսը գիտի, թե ես ձեզանից ավելի խելք ունեմ: Ասացին. Ո՛վ տեր, ասա ի՞նչ ես կամենում, որպեսզի ընդունենք քո խոսքը և հնազանդվենք քո հրամանին: [Ասաց]. Ո՛վ մարդիկ, իմացեք, որ մենք միամիտ գնում ենք, իսկ շուտով կտեսնեք, որ ձեր կհարձակվեն մեզ վրա և նետեր կտեղան: Ասացին. Իսկ դա ինչպե՞ս

⁶ Տպ. Թարդուն (ثاغون), ձեռ. Յարդուդ (بَغُوز), Թրդմ. Bugur.

⁷ Թրդմ. 53 Chaisani:

կլինի: Ասաց. Չէ որ արաբները չեն քնում և ոչ էլ անհոգ նստած են, հաղթանակը նրանցը դարձավ, իսկ Շահրիադ թագավորը ավելի զորեղ չէ և ոչ էլ ավելի զորք ունի, քան Հերակլը (Հիրակլ)⁸ և երկրի մյուս թագավորները: Արաբները տիրել են նրանց երկրներին, գրավել նրանց ամրոցները, ստորացրել նրանց թագավորներին: Ես դիտեմ, որ Շահրիադը ճակատամարտում արաբների դեմ չի կարող դիմանալ: Նրանք տիրել են նրա երկրին, այսինքն՝ Խառան, Եղեսիա (Ռուհա), Սարուջ, Ալ-Բիրա և Խաբուր [վայրերին]: Նրանք գրավեցին Մարդինը, Մարդինի բերդը, այսինքն Հիսն ալ-Մարա (Կնոջ բերդ), գերի վերցրեցին Արսուսին և նրա Մարիյա դստերը: Եվ ահա արաբները կտիրեն Շահրիադի [ամբողջ] երկրին և կհարձակվեն ձեզ վրա, կնվաճեն ձեր երկիրը ու կգերեզմարեն ձեր կանանց: Իմացեք, որ ճշմարտությունը արաբների կողմն է և եթե նրանք մի բան ասեն, իրենց խոսքը կհարգեն, իսկ ով նրանց հանձնվի, կապահովի իր անձը, իր ընտանիքը և ունեցվածքը, անկախ այն բանից կընդունի նրանց կրոնը, թե կմնա իր կրոնին: Գիտեցեք, որ իմ սրտում կրակ կա այդ աղջիկ (ջարիյա) Տարոնի նկատմամբ: Ես նրան լուր ուղարկեցի, որ ինձ կին դառնա և ես նրան տեր (ամուսին), իսկ նա մերժեց: Ես սիրում է Սասունի թագավորի որդուն և եթե նրանք ամուսնանան և ձեռք ձեռքի տան, կգրավեն մեր ամրոցները, կտիրանան մեր բերդերին և մենք նրանց հետ այլևս չենք կարող ապրել: Ես որոշեցի այս գիշեր բռնել նրան: Ապա նա տեղեկացրեց նրանց այն, ինչ ծառան էր պատմել:

Ասացին. Ո՛վ թագավոր, եթե նրան բռնես, ապա ո՞ր երկիրը քեզ ապաստան կլինի և ո՞ր բերդը քեզ կպաշտպանի: Ասաց. Կդիմենք արաբների բանակատեղին և նրանց մոտ ապավեն կգտնենք: Ասացին. Եթե դու համոզված ես՝ որոշիր: Ասաց. Զգուշացեք ձեր անձերի համար ու պատրաստվեք մեկնելու և նրանք այդպես էլ արեցին:

Ասել է Վակիդին. Երբ վրա հասավ գիշերը, նրա (աղջկա) հորեղբորորդի Բակուրը ծալտվեց պատանի (ղուլամ) Մուշի ղզեստով և գնաց աղջկա վրան: Երբ սա տեսավ նրան, կարծեց, որ Մուշն է, վեր կացավ, ցատկեց նրան ընդառաջ և ողջունեց նրան: Նա հեռացրել էր պահակներին, ծառաներին ու սենեկապետներին, որպեսզի ոչ ոք տեղյակ չլինի իր գաղտնիքին: Ապա երբ ստույգ իմացավ, որ սա իր հորեղբորորդին է, ամաչեց նրանից, վախեցավ և մեծ ջանասիրությամբ սկսեց ծառայել նրան: Նա ասաց նրան. Ո՛վ Տարոն, կարծում ես չգիտե՞մ քո գաղտնիքը և չե՞մ հետաքրքրվում քո միջնորդությամբ հռոմեաների ու հայերի միջև: Դու հո հակված ես Սասունի թագավորի որդուն և ինձ նմանին թողել ես: Ապա նա ուժով մոտեցավ նրան, բռնեց, բերանը [շոր] խցկեց, փաթաթեց նրան և տարավ իր բանակատեղին: Տեսավ, որ իր ընկերակիցները հաջնվել, հեծել են, վրանները քանդել և բեռները վերցրել: Երբ նրանց մոտ հասավ, նրան (Տարոնին) մի ջորու վրա դրեց ու հեռացան:

Երբ Մուշի ընկերակիցները տեսան Բակուրի ճանապարհ ընկնելը, վերջինս ասաց նրանց. Դուք մի աճապարեք ճանապարհ ընկնելու մինչև որ արշալույսը ծագի, քանզի ճանապարհը նեղ է և ձիերն ու ջորիները խոնվում են:

8 Թրգմ. հիշելուց հետո, որ նա աշխարհակալ էր, ավելացնում է՝ և նա հայազգի Մահանի (Վահան) հրամանատարության տակ զորք ուղարկեց Յարմուք, սակայն նրանք (արաբները) հաղթեցին ու սպանեցին նրա հրամանատարներին, ասպետներին (էջ 56):

Այդպես էլ արեցին: Իսկ Բակուրը արագացրեց ընթացքը և երբ բացվեց առավոտը, նա արդեն Մարջ (մարդագետին) ալ-Սուր էր հասել, ուր իջևանեց:

Ինչ վերաբերում է պատանի Մուշին, ապա նա չգնաց աղջկա մոտ, ոչ էլ հարցրեց նրան կամ հետաքրքրվեց նրանով, քանզի վախենում էր, որ դա խորամանկություն լինի նրա կողմից իրեն բռնելու համար: Երբ առավոտը լուսացավ, նա հրամայեց իր ծառաներին ճանապարհ ընկնել, և կավ աղջիկ Տաբոնի վրանի մոտ և տեսավ, որ նրա մարդիկ սպասում են նրա դուրս գալուն վրանից: Նրա ծառան ներս մտավ նրա մոտ և դուրս գալով ասաց նրանց, թե թագուհին չկա և ոչ մի պատճառ չկա, որ նա բացակայի: Նրանց ընկերները հուզվեցին և ուղեցին ետ դառնալ, սակայն նրանց տերը (Մուշը) ասաց. Եթե վերադառնանք թագավորի մոտ, ապա վստահ չենք կարող լինել, որ մեր վզերը չի կտրի ասելով, թե ինչպես չիմացաք, երբ աղջկանս ձեր միջից փախցրեց: Են, իսկ դուք անտեղյակ եք եղել: Սակայն նրա հորեղբորորդի Բակուրը կարող է թագուհուն փախցրած լինել, քանզի նրա սրտում սեր կա: Այսպես նրանք հեծան ու աճապարեցին նրանց ետևից:

Երբ Բակուրը իջել էր Մարջ ալ-Սուրում և հանգստացել պատրաստվելու համար երթի, (Տարոնի) մարդիկ վրա հասան և սկսեցին գոռալ. Վա՛յ քեզ, ձեռքիցդ բաց թող թագուհուն նախքան որ քեզ կսպանենք: Իսկ նա, ինչպես նաև իր մոտ եղած հորեղբորորդիներն ու աղգականները, ընդունեցին նրանց և նա ասաց իր [մյուս] հորեղբորորդիներին. Իմացեք, որ արաբները իրենց թշնամիներին հաղթել են միայն իրենց կրոնական ջերմեռանդությամբ և ալլահի կրոնի համար կռվելով ու գիտեցեք, որ եթե մենք դիմենք նրանց, այդ մարդիկ չեն զլանա [իրենց բարյացակամությունը], մանավանդ եթե իմանան, որ մենք բռնություն չենք իրենց և ցանկացել, այլ խելքով: Նրանց կրոնը ավելի լավն է, քան մեր կրոնը, քանզի նրանք ալլահին մեկ են համարում, իսկ մենք երկրպագում ենք խաչերին ու պատկերներին, ասում ենք, որ արարիչը ունի կին և որդի, իսկ նա մեկ է միակ, և զակի ու հավերժական: Ես լսել եմ, որ ասում են, թե ով իրենցից սպանվի՝ կգնա դրախտ, իսկ ով մեզանից սպանվի՝ կրակի բաժին կդառնա, քանզի մենք նրանց համար անհավատներ ենք: Ուստի եթե հաղթանակ եք ուղում ձեր թշնամիների դեմ, վկայեցեք ալլահի միակ լինելը և ասացեք՝ չկա աստված, բացի ալլահից և Մուհամմադը նրա մարգարեն է: Եվ նրանք միաստվածության կոչը հայտնեցին ու նրանց ձայներից թնդացին լեռներն ու բլուրները, ավաղները, ծառերն ու քարերը: Երբ ալլահի թշնամիները լսեցին այս խոսքերը, իմացան, որ նրանք մտել են մահմեդական կրոնի մեջ և Մուշը եկավ պաշարեց Բակուրին ու ընկերակիցներին: Ասացին նրանց. Վա՛յ քեզ, ո՞վ Բակուր, դու այնքան առաջ ես դնացել դավաճանության մեջ, որ քրիստոնեական կրոնն ես ուրացել: Կարծում ես, որ նրանց կրոնին դարձած լինելու շնորհիվ քեզ կպաշտպանեն: Ո՞ւր են արաբները, մինչև քո ձայնը նրանց հասնի, մենք ձեզ վերջ կտանք և չարաչար կերպով մինչև վերջին մարդը կկոտորենք: Այսպես կանչեք տեսնենք Մուհամմադին, որ ձեզ օգնության գա:

Այսպես նրանք հարձակվեցին Բակուրի ու ընկերակիցների վրա, իսկ սրանք դիմադրեցին նրանց վճռականորեն և արդար խոսքն ու աղոթքը ուղեցին արարածների տիրոջը...⁹:

⁹ Այստեղ մի երկարապատում մաղթանք կա ալլահին ուղղված:

Ասել է Վակիդին. Երբ նրանց շրջապատեցին և Բակուրն ու ընկերակիցները բնաջնջվելու վտանգի առջև էին, ահա բացվեց Սուրի դուռը և հարյուր ձիավորներ կատաղած առյուծների նման դուրս եկան և իրենց ձայնը բարձրացրին ուրախ կոչերով ու ալլահ աբբար (ալլահ մեծ է) գոռալով: Նրանք գոչեցին. Ո՛վ միաստվածություն¹⁰ կոչին կառչածներ, ուրախացե՛ք հաղթանակով և օգնությամբ, ահա մենք պատասխանեցինք ձեր կոչին և դուրս եկանք ձեզ զորավիգ լինելու, մենք ձեզ կաղատենք վտանգավոր դրությունից, քանզի առաքյալի բարեկամներն ենք:

Ասել է Վակիդին. Սուրը [այդ երկրի] բերդերից մեկն էր և հանձնված էր առաքյալի բարեկամներին: Իյադ իբն Ղանմը ուղարկել էր Աբդ ալ-Ռահման իբն Աբու Բաքրին հարյուր ձիավորներով պարեն բերելու համար: Սրանց մեջ էին [Մուհամմադից սերող] սայիդներ:

Երբ սրանք հասել էին Սուր, բերդի տեր Թալուտը նրանց դիմավորել էր ընդունել, պատվել, հրամայել ճաշ բերել և նրա մոտ երեք օր մնացել էին, մինչև որ [ինչպես պատմեցինք] եկավ Բակուրը, որի հետ պատահեց այն, ինչ արդեն նկարագրեցինք: Եվ ահա, երբ լսվեց նրանց ալլահ աբբար գոռացող ձայնը, ասացին [հարյուր ձիավորները]. Այդ մարդիկ ընդունել են մեր կրոնը և մենք պարտավոր ենք նրանց օգնել: Նրանք դուրս եկան, ինչպես պատմեցինք և հարձակվեցին ալլահի թշնամիների վրա, զորավիգ լինելով Բակուրին և նրա ընկերակիցներին, իսկ [թշնամիները] գիշերը փախուստի դիմեցին դեպի Մարջ Ռադբան Շահրիադ թագավորի մոտ ու պատմեցին իրենց հետ պատահածը: Նա արդեն կռահեց իր թագավորության վախճանը:

Երբ առավոտը եղավ, Բակուրը եկավ [Մուհամմադի] մերձավորներին մոտ և փառք տվեց ալլահին, որը նրանց միջոցով փրկեց նրան ու իր ընկերակիցներին, որոնք ավելի հաստատուն դարձան հավատի մեջ: Նա մերձավորներին պատմեց կատարվածի մասին և նրանց հետ գնաց Իյադ իբն Ղանմի մոտ: (էջ 70—73):

Դարալի Բիրհալի և Բաամմալի նվաճման մասին

Իյադ իբն Ղանմը դուրս եկավ Ռաս ալ-Այնից և կանգ առավ Քաֆր Տուտայի մոտ: Նրա մոտ եկավ պատանի Բակուրը, որին նա ողջունեց և կառավարիչ նշանակեց քաղաքի վրա: Նա մահմեդականություն առաջարկեց Շարոնին, որն ընդունեց և նրան ամուսնացրեց հորեղբորորդու հետ: Նա եկեղեցին մզկիթի վերածեց և ասյա գնաց Դարա, որտեղ կանգ առավ և նրա մոտ եկան բնակիչները: (էջ 83):

Յամանիալի և Ջուդի¹¹ լեռան նվաճումը

Իյադը բաց թողեց գերիներին, որոնց բերել էր Կայս իբն Հուբայրան և հեռացավ դիմելով նփրկիտ (Մայյաֆարիկին): Ճանապարհին նրա դիմաց

¹⁰ Մահմեդականները գտնում են, որ միայն իրենք են միաստվածյաններ. իսկ քրիստոնյաները բազմաստվածյաններ են, քանի որ ընդունում են՝ «հայրը, որդին և սուրբ հոգին» երրորդությունը:

¹¹ Արաբացի լեռը Կորդուր գավառում, որի վրա, ըստ արաբ մատենագիրների, Նոյան տապանն է կանգ առել:

ելան ւայդ լեւներ ընակիչները և Ջաղիրայի, Կուլբի, Մատնանի, հարբ ալ-Քիլաբի ժողովուրդը, որոնց նա երաշխավորագիր (աման) տվեց և գլխահարկ նշանակեց ու վերադարձրեց իրենց երկիրը։ Նրան ընդառաջ ելան նփրկերտի բնակիչները, շնորհակալություն հայտնելով լավ վերաբերմունքի ու արդարության համար։ Հյուրասիրեցին նրանց ու անասնակեր տվեցին։ Նա (Իյադը) կանգ առավ լեռան ստորոտում, դաշտի վրա և տասը օր մնաց։

Ապա հավաքեց ալլահի առաջալի մեծավորներին և խորհրդակցեց ասելու։ Ես որոշել եմ Հայաստան երկիրը և Արդան ալ-Ռում (Արդրում) գնալ։ Խորհուրդ տվեք ինձ, ալլահը ձեզ ողորմի, ի՞նչ ճանապարհ ընտրեմ։ Ասաց նրան հպատակ քրիստոնյաներից (մուահիդներից)¹² մեկը, որը լավատեղյակ էր ելկրին։ Ո՛վ իշխան (ամիր), թույլ կտա՞ս խոսել։ Ասաց նրան։ Ով որ կարծիք ունի, թող խոսի։ Ասաց. Իմացիր, որ եթե Հայաստան երկիրը դիմես, երկար կտևի այնտեղ մնալը։ Իսկ քեզանից ոչ հեռու կա մի անառիկ բերդ, որը կոչվում է Լադուբ, նրա տերն է Բալուբ իբն Քանաան իբն Աբդուսը, որն ունի անթիվ զորք, ավելի քան երեք հազար ձիավոր... (էջ 91)։

Թանգայի, Յամհիրդի և Սղերդի նվաճման մասին

Նա (հալիդը) թեքվեց անցնելու համար դեպի Սղերդ (Իսիրդ) ու Յամհիրդ և ահա նրա մոտ եկավ Թանգա ամրոցի ժողովուրդը հաշտություն խնդրելու և մահմեդականներին հնազանդ դառնալու։ Ասաց հալիդը. Ով ձեզանից մահմեդականանա, կընդունենք նրան և նա կունենա մեր իրավունքները և մեր պարտականությունները, իսկ ով կմնա իր կրոնին, կվճարի գլխահարկ հաջորդ տարվանից։ Նրանք ընդունեցին և նա գրեց պայմանագիր և անցավ Թանգա, Յամհիրդ, Սղերդ, Մադան և Արդն և պայմանագրեր կնքեց ու զոհացան։ Եվ Յուկանան ամուսնացավ այդ բերդերի տիրուհու՝ Ջալուսայի¹³ հետ։ Խալիդը Իյադի մոտ հասավ ու գտավ նրան Սուկարիայում¹⁴, որը Գուդիսի (Ջալուսի) քաղաքն էր։ Երբ Խալիդը հասավ նրա մոտ, մարդիկ ողջունեցին իրար և նրանք հինգ օր մնացին, ապա ուղղվեցին դեպի Բադեշ ու Խալիս։ Եվ ահա լուր հասավ, թե թագավորի դուստրը՝ Տարոնը, որ կինն էր Քաֆր Տուտան նվաճող պատանի Բակուրի, և որի մասին արդեն խոսել ենք, փախել է իր հոր մոտ և վերադարձել իր [քրիստոնեական] կրոնին։ Այս բանը նրանց վրա ծանր ազդեց։

Ասում է Վակիդին. Ինձ պատմել է Մուհամմադ իբն Յունիսը, թե լսել է Իսմայիլից, որը լսել է Կալսից, թե Տարոնը քրիստոնյա չի դարձել և ոչ էլ հեռացել մահմեդականությունից, այլ գնացել է հոր մոտ, որպեսզի նրա դեմ խորամանկություն գործադրի և երկիրը հանձնի մահմեդականներին, որովհետև նա ուզում էր անել այն, ինչ նրա ամուսին Բակուրը արել էր Քաֆր Տուտայում¹⁵։ Այս հարցում նրա և ամուսնու կարծիքները համընկան։ Բակուրն

¹² Մահմեդականություն ընդունած, բայց հաշտության պայմանագրով (لحظ) գլխահարկ վճարող մարդիկ, այսինքն մահմեդականներին հպատակ քրիստոնյաներ կամ հրեաներ։

¹³ Թրդմ. 123 Mar Hanus tochter des Dscharafnas.

¹⁴ Թրդմ. 123 Sufaria.

¹⁵ Բակուրը խաբեություն էր գրավել Քաֆր Տուտան։

ասաց. Իսկ ես քեզ չեմ հետևի, քանզի վախենում եմ հորիցդ, որ ինձ կբռնի։ Նա (աղջիկը) ասաց նրան. Մնա տեղումդ, Իսկ ինքը զգեստները¹⁶ հագավ և ճանապարհի պատրաստվեց։ Նա իր ծառաներին մի խուլ տեղ հավաքեց ու ասաց նրանց. Իմացե՛ք, որ ես մի գործի եմ ձեռնարկել, որի մասին ձեզ հայտնելու եմ։ Ասացին. Ո՛վ թագուհի, ստրուկը պետք է միայն հնազանդվի իր տիրոջը, ասա մեզ քո գաղտնիքը։ Ասաց. Իմացե՛ք, որ ես ղզվել եմ մնալով այս արաբների մեջ և միաժամանակ կարոտել եմ իմ հայրենիքը։ Որոշել եմ ձեզ հետ որսի դուրս գալ լեռը։ Երբ գիշերը վրա հասնի, կգիմենք մեր երկիրը։ Երբ լսեցին նրա խոսքերը, հրճվեցին ու ասացին. Լավ կարծիք է։ Ասաց. Ես ձեզ չեմ ստիպում, ով այստեղ մնալու ցանկություն ունի և հակված է այս կրոնին, թող մնա առանց քաշվելու, իսկ ով կամենում է հայրենիք վերադառնալ, ապա թող ինձ հետ գա, քանի որ այս գիշեր մեկնում եմ, սակայն եթե լսեմ, որ ձեզանից որևէ մեկը իմ գաղտնիքը հայտնել է Բակուրին կամ ուրիշ մարդու, նրա վիզը կկտրեմ¹⁷։ Ուստի ով որոշել է ինձ հետ գալ, թող ինձ հետևի։ Նրանք համաձայնվեցին։ Երբ գիշերը վրա հասավ, նա հրաժեշտ տվեց Բակուրին ու դուրս եկավ տասներկու հոգու հետ, որոնք մահմեդականություն չէին ուղում ընդունել։ Քաֆր Տուտայում էլ նա ունեցել էր տասներկու ծառաներ¹⁸, որոնց սրտերում մահմեդականությունը արմատավորվել էր և սիրել էին մահմեդականներին։

Նա քայլեց դեպի լեռը և գնաց մինչև որ իր ետևում մնաց Արլընը և հասավ Բաղեշ, որի տերը ընդառաջ եկավ նրան, օթեան տվեց և անասուններին կեր ու գիշերվա մնացած մասը նա այնտեղ մնաց։ (էջ 93—94)։

Բաղեշի, Արզնի և լեռնոց գավառների նվաճման մասին

Երբ Իյադը կանգ առավ Սուկարիայում և նրան միացան նաև Խալիդն իր ընկերակիցների հետ, ինչպես նաև Յուկաննան, մահմեդականները ուրախացան նրանց ողջությանը և պատմեցին [Իյադին] պատահած դեպքերի մասին ու նա գոհություն հայտնեց ալլահին։ Ապա Յուկաննան դեսպան ուղարկեց Բաղեշի տիրոջը։ Արլընը, Բաղեշը, Կիֆ ունդուրը և ուրիշ բերդեր պատկանում էին մի պատրիկի, որի անունն էր Սարուանդ որդի Պոդոսի (Բուլուս)։ Աղջիկ Տարոնը այնտեղ էր գտնվում՝ Սարուանդի մոտ։

Երբ իմացան Յուկաննայի գալստյան մասին, ձիերով գնացին նրան դիմավորելու։ Տարոնը նրա հետ առանձնացավ ու ասաց. Հորեղբայր¹⁹, չկարծես թե ես փախել եմ, ոչ էլ ուզում եմ հոռոմների մոտ գնալ, այլ կամենում եմ նվիրված լինել ալլահին, նրա առաքյալին ու մահմեդականներին, իսկ հորս ուզում եմ դավաճանել ու սպանել և նրա բերդերը մահմեդականներին հանձնել։ Սակայն. հորեղբայր, ցույց տուր թե ինչ պետք է անեմ. դու գիտես, որ այս լեռնանցքը²⁰ Բաղեշին ու Խլաթին է պատկանում և նրա վրա կա Կիֆ

16 Ձեռ. 126 ա ուրիշի զգեստները։

17 Ձեռ. էջ 126 ա ավելացնում է՝ ասացին. Ո՛վ թագուհի, մեզանից ոչ ոք չի հայտնի քո գաղտնիքը, մենք ստրուկներ ենք և լավությունը վատությամբ չենք փոխհատուցի։

18 Թրգմ. 124 մյուս ծառաներին, թվով երկու հարյուր վերադարձրեց Քաֆր Տուտա։

19 Հորեղբայր բառը օգտագործված է փոխարեբական իմաստով։

20 Հավանաբար Ձորա պահակ լեռնանցքն է։ Կիֆ ունդուր նշանակում է կանգնիր նայիր։

ունդուր բերդը և եթե արաբները կամենան անցնել, չեն կարող: Ի՞նչ ես մտածում, ես վախենում եմ, որ հորս մոտ հասնելուց հետո չկարողանամ վերադառնալ իմ ամուսնու և մահմեդականների մոտ: Ասաց նրան Յուկաննան. Իմացի՛ր, որ եթե դու այդ նպատակով գնաս, ապա փառավորյալ ու բարձրյալ ալլահը կբացի բարու դռները: Գնա այդ ձևով, իսկ ես անպայման կգնամ քո հոր մոտ Իյադ ամիրի նամակով և ահա առավոտյան ես կշարժվեմ: Այնտեղ հասնելուց հետո ամեն ինչ կդասավորվի ալլահի ուղած ձևով և մեր նպատակին կհասնենք նրա կամքով: Եվ նա սովորեցրեց նրան, թե ինչ պետք է անել և հրաժեշտ տվեց նրան: Դարձավ [Տարոնը] և ասաց. Այս անմիտը²¹ պնդում է ինձ ու համոզում, որ ետ կանգնեմ իմ որոշումից, վերադառնալով Քրիստոսի կրոնին: Եվ եթե նրա ընկերակիցներից չվախենայի, ինչպես նաև այս բերդի տիրոջից, որ նրան կօգնի մեր դեմ, ապա ես կձերբակալեի նրան:

Ապա նստեց իր ձին և արագ գնաց: Իր ծառաներից ոմանց ուղարկեց հոր մոտ՝ ավետելու իր գալուստը: Երբ լուրը հասավ, քաղաքը պատրաստվեց և հալոն ու պատրիկները և քաղաքի ժողովուրդը գնացին նրանց դիմավորելու և հանդիպեցին նրան հաղարիայի²² մոտ: Երբ տեսավ հորը, իջավ ձիուց և հայրն ու ամբողջ զորքը ողջունեցին նրան: Հայրը սեղմեց նրան իր կրծքին ու ասաց. Աղջիկս, ի՞նչ պատահեց քեզ: Ասաց. Բակուրը ինձ տարավ իր հետ և հասցրեց մահմեդականների բանակը ու մահմեդականացավ, իսկ ինձ մնում էր միայն հնազանդել նրան, վախենալով նրանից, սակայն հենց որ Դիարի բաքը մտան, փախա քեզ մոտ²³: Հայրը երեսը խաչակնքեց և շնորհավորեց նրան ողջության համար: Ապա հեծավ ու գնացին, իսկ թափորը նրանց հետեց, մինչև որ մտան քաղաք: [Տարոնը] մտավ թագավորական սպառտը և նրան դիմավորեցին ու ողջունեցին աղախիներն ու ծառաները: Լաց եղան նրանք և նա ևս լաց եղավ և նվերներ, ուխտեր արեց վանքերին ու եկեղեցիներին: Պատմեց բոլորին, թե ինչ էր պատահել իր հետ և Շահրիադի պատմությունը, թե ինչպես գրավվեց Ռաս ալ-Այնը: Ասաց հայրը. Աղջիկս, ինչպե՞ս գտար նրանց կրոնը: Ասաց. Ո՛վ թագավոր, մարդիկ կրոնասեր են ձեզանում, նրանք կրոնը և արդարությունը պահպանում են, որպեսզի մարդիկ նրանց [կրոնին] դառնան: Աստված վկա, չկա ավելի լավը, քան Քրիստոսի կրոնը: Արաբների ձեռքից աղատվելուց հետո ես ուխտ արեցի այլևս զոհ չմատուցել, գինի չխմել, ոչ էլ խոզի միս ուտել և ոչ մկրտության ջրի մեջ մտնել²⁴, մինչև որ [սուրբ] Հովհաննեսի վանքում²⁵ լրիվ երկու ամիս չապաշխարեմ: Միայն նրանց կրոնից մաքրվելուց հետո ես զոհեի կմատուցեմ (մատաղ կանեմ) և խաչեր կհամբուրեմ: Հայրն ուրախացավ այս բանի համար և մյուս օրը նա (Տարոնը) գնաց վանք և այնտեղ մնաց աղքատներին բարիք գործելով, աստվածապաշտությամբ ու երկրպագությամբ զբաղվելով: Այնտեղ նա սպասում էր Յուկաննային, որը խոստացել էր նամակով գնալ հոր մոտ:

Ասել է վակիդին. Ինձ պատմել է Արու Մուհամմադը և ասել. Պատմել է ինձ վստահելի մի մարդ լսելով Կայս իբն Հուբայրայից, թե. Ես Յուկաննայի

21 Գուցե ասված է հորեղոր՝ Սարուանդի մասին:

22 Ձեռ. 126 բ. այս տեղանունը չունի:

23 Ձեռ. 1 և 126 բ. ավելացնում է՝ մի առիթ գտա և (փախա քեզ մոտ):

24 Ձեռ. 126 բ. ավելացնում է՝ և ոչ խաչակնքել կամ խաչ համբուրել:

25 ܕܥܠܝ Բաղը նշանակում է եկեղեցի կամ վանք:

մերձավորներից էի այն ժամանակ, երբ նա նամակով գնացել էր Բաղեշ և խոսել Տարոնի հետ: Բաղեշի տերը մարդ էր ուղարկել նրա մոտ և երբ իմացավ Յուկաննայի գալստյան մասին, բարձրացավ իր բերդը: Դնացինք նրա մոտ և գտանք նրան իր թագավորական գահին նստած ու ողջունեցինք նրան: Ասաց Յուկաննան. Մահմեդական զորքերի հրամանատարը Ռաբիա երկրում՝ Իյադ իրն Ղանմը ուղարկել է մեզ, որպեսզի քեզ հրավիրենք ընդունելու միակ ալլահին և նրա մարգարեի առաքելությունը, որից հետո դու կունենաս մեր իրավունքներն ու պարտականությունները: Հիշենք անցյալի թագավորներին, երկրներին ու իշխանության տերերին, որոնք կորան: Ի՞նչ է քո պատասխանը: Ասաց. Ո՛վ տեր, ես ինքս ուղում էի դեսպան ուղարկել ձեր իշխանի մոտ հաշտություն խնդրելու և նրան որոշ բան զիջելով մնալու իմ կրոնի մեջ: Իսկ իմ ժողովրդից ով որ կուզենա դառնալ այլոց կրոնին, չեմ խանգարի: Ասաց Յուկաննան. Ինչքա՞ն կվճարես պայմանագրի դիմաց Բաղեշի, Արզնի և քո ձեռքի առակ եղած ամբողջ երկրի համար, որպեսզի երբ ստորագրեմ պայմանագիրը, արաբները գոհ լինեն: Ասաց. Ո՛վ տեր, կտամ նրանց հարյուր հազար դինար, հինգ հարյուր զրահ և հազար աղեղ և թող ոչ ոք իմ թագավորության մեջ ինձանից բացի չիշխի մինչև իմ մահը և [արաբներից] ոչ ոք չմնա ինձ մոտ, բացի մեկ կամ երկու հոգուց, որպեսզի մահմեդականություն ընդունողներին շարիաթի օրենքները սովորեցնի: Իմ հրամանները պետք է ի զորու լինեն իմ թագավորության մեջ, իսկ ով մահմեդականություն ընդունի, թող ձեր կողմից նշանակված մարդկանց նման լինի և ես նրա վրա իշխանություն չեմ ունենա: Ասաց Յուկաննան. Կստորագրեմ քո հաշտության գիրը և կլրացնեմ քո պայմանագիրը: Մենք քեզ տալիս ենք ալլահի ու նրա առաքյալի պայմանագիրը ըստ իմ հիշած ձևի: Եվ նա տվեց ալլահի ու նրա առաքյալի պայմանագիրը և նրա հետ հաշտություն կնքեց նույն ձևով, ինչպես որ ալլահի առաքյալը հաշտություն էր կնքել հոռոմների թագավոր Հերակլի հետ և նրան երդվեց բոլոր մահմեդականների անունից:

Կայսը գնաց Իյադի մոտ ու տեղեկացրեց այն, ինչ որոշվել էր իրենց միջև: Երբ Յուկաննայի նամակը հասավ Իյադին, տեղից վեր կացավ ու հասավ Բաղեշ, տեսավ, որ սլատրիկը համակերպվել է հաշտության պայմանագրին: Երբ եկավ Իյադը, պատրիկը դիմավորեց նրան, ընդունեց, ողջունեց լավագույն ողջուններով և օթևան տվեց լավագույն տանը, դրամ տվեց²⁶ և այդ մասին պայմանագիր գրեցին:

Եմենից և Արաբական անապատից եկած մահմեդական մարդիկ, երբ տեսան, թե ինչ գեղեցիկ են տեղի աղջիկները²⁷, իրենց սիրտը թեքվեց նրանց կողմը և մեծ մասը սկսեց գինի խմել: Այս տեսնելով Իյադը դժգոհ մնաց և հրամայեց իր մոտ բերել նրանց, ովքեր այդ բանն արել էին, նրանց պատիժ սահմանեց և ալլահի օրենքին ինթարկեց: Ասաց. Մի՞թե մեղանշելու եք հավատալու հետո, մի՞թե այդպես էին ձեզ հրամայել, կամ մի՞թե դրա համար էիք ստեղծվել: Մի՞թե չեք լսել, թե ինչ է ասել [ալլահը] Քաֆի և Նունի²⁸ միջև: Նրանք բոլորը զղջացին:

26 Ձեռ. 127 ա փոխարենն ունի՝ տվեց անասնակեր, դրամ և զրահներ:

27 Ձեռ. 127 ա ունի՝ հոռոմ աղջիկներ, թարգմ. ունի՝ հայ և ռուս (պետք է լինի ռում՝ հոռոմ) աղջիկներ:

28 Ըստ երևույթին խոսքը արաբական այբուբենի երկու տառերի (Քաֆ և Նուն) միջև

Երբ գիշերը վրա հասավ, Յուկաննան Իյադի հետ խորհրդակցեց ու զրուցեց Տարոնի գործի մասին՝ թե ինչպես պարտավորվել էր և թե ինչպես նա իր անձը նվիրել էր ավլահին ու մտածում էր, թե ինչ ձևով երկիրը հանձնե՞ր մահմեդականներին։ Ասաց. Ես նրան խոստացել եմ գնալ մոտը և օգնել։ Իյադն ասաց. Եթե այդպես է զրույցունը, ապա պետք է հալիդին ու մերձավորներին տեղյակ դարձնել։ Ասաց Յուկաննան. Արա ինչ որ հիշտ է։ Սա մարդ ուղարկեց հալիդին, Մուադին, Կայսին, Մուսայյիբ իբն Նաջիային, Ամրու իբն Մուադ Յաքրիբին և Աբդ ալ-Ռահման իբն Աբու Բաքրին և պատմեց այս զրույցի մասին ու հարցրեց. Ինչ կարծիք ունեք։ (էջ 93—94)։

Հայաստանի, Խլաթի և Կիֆ ունգուրի նվաճման մասին

Ասաց հալիդը. Ալլահը թող ողորմի ամիրին, եթե բանն այդպես է, ապա Յուկաննային դեսպան ուղարկիր մեզ հետ միասին և եթե այնտեղ հասնենք, թող ալլահն անի ինչ որ կամենա, [քանզի] ներկան տեսնում է, ինչ որ բացական չի տեսնում։

Ասաց. Գնացինք բարձրյալն ալլահի ողորմածությամբ։ Պատրաստվեցին ու գնացին Յուկաննայի հետ [Մուհամմադի] մերձավորներից երեսունհինգ հոգի ու քսան հոգի էլ Յուկաննայի մերձավորներից։ Երբ հասան Խլաթ, հռուռմներն ու հայերը նայելով նրանց, իմացան, որ պատգամավորներ են և այդ մասին հայտնեցին թագավորին, ինչպես նաև այն, որ դրանք արաբներ չէին պատգամավորներ են։ Հրամայեց մոտ բերել դրանց և սենեկապետները նրանց տարան Ռումիա (հռուռմների) դուռը, որը Բաղեշի դուռն էր և տեսան, որ նրանք ձիերի վրա նստած սպասում էին ու ասացին. Մտեք, Տարան նրանց իշխանական տունը ու հայտնեցին Յուսթինուս²⁹ թագավորին այդ մասին և նա հրամայեց բերել նրանց։ Երբ դահլիճի մեջտեղը հասան, ծառաներն ուղեցին նրանց ղենքերը վերցնել։ Ասաց հալիդը. Մենք այնպիսի մարդիկ ենք, որոնք իրենց սրերը ուրիշներին չեն հանձնի. ալլահը մեր մարգարեին սրով է ուղարկել, մենք այն կապել ենք և չենք հանի, ինչ որ ալլահն ու մեր մարգարեն տվել են մեզ։ Սենեկապետները մտան և հայտնեցին թագավորին, ինչ որ հալիդն ասաց։ Ասաց թագավորը. Թողեք մտնեն ինչպես որ ուզում են, որ չկարծեն, թե մենք իրենցից վախենում ենք, այլ թող իմանան, որ այսպես է մեր թագավորական օրենքը։ Այդպես էլ մտան և երբ երևացին նրանք ու ողջունեցին, նստեցին գետինը և առյուծների նման ամեն մեկն իր ձեռքը սրի կոթի վրա էր դրել։ Թագավորն իմացավ, թե ինչ կրոն ունեն և թե ինչպիսի բարեպաշտն են նրանք այս աշխարհում և իր մերձավորներին հանձնարարեց, որ նրանց չհրամայեն իրեն ողջունել, քանզի նրանք չէին պատասխանում։ Երբ նրանք հանգիստ նստեցին, նրա թարգմանը ասաց. Ո՛վ մարդիկ, ի՞նչ գործով եք եկել մեզ մոտ։ Ասաց Յուկաննան. Բաղեշի երկրում գտնվող մահմեդական զորքի հրամանատարը մեզ պատգամավոր է ուղարկել

ընկած կամ և միմ տառերի մասին է, որոնցից կազմվում է կամ () այսինքն ոչ ժխտա-

կան դերանունը։ Ուզում է ասել, թե այդ բանն արգելված է։ Թրգմ. 156։

²⁹ Տպ. Բուսթիուս, իսկ թարգմ. 131. Nustinus։

քեզ կոչ անելու, որպեսզի դավանես, թե չկա աստված, բացի ալլահից, միակն ու անընկերը և որ Մուհամմադն է նրա ծառան ու առաքյալը: [Այլապես] ընդունեք այն, ինչ որ այլ մարդիկ ընդունել են, հնազանդվելով և անձամբ վճարելով գլխահարկը: Թարգմանը հայտնեց թագավորին ինչ որ Յուկաննան ասել էր:

Պատմել է մեզ Կուդաման, որ նրանց միջև թարգման չի եղել, այլ Յուկաննան հունարեն էր խոսում, որը իշխանության³⁰ լեզուն էր: Ասաց Վակիդին. Պատմել է ինձ մի վստահելի մարդ, թե նրանց միջև թարգման կար, որովհետև թագավորը հայ էր և միայն հայերեն էր հասկանում, իսկ Յուկաննան հոռոմ էր և այլ լեզու չգիտեր:

Երբ թարգմանը հայտնեց, [թագավորը] զայրացավ և ասաց. Քրիստոսն ու Ավետարանը վկա, հարկ չենք տա նրանց և չենք ենթարկվի նրանց կրոնին, այլ կմեռնենք մինչև վերջինը և թող իմանան, թե մենք նման չենք իրենց հանդիպած հոռոմ զորքերին: Մենք ունենք քաջություն, հզորություն, ուժ և եռանդ. մենք աղեղներից նետեր ենք արձակում, որն արաբները կոչում են կյանք³¹ և կենդանություն³² կտրող: Ես լուր կուղարկեմ խոյի և Սալմաստի (Սալուս) տիրոջը և նրանց [արաբների] դեմ կհանեմ Ասրաղուսին՝ Մարջի (մարգագետին)³³ թագավորին և նրանց ետ կշարտենք ու երկիրը նրանցից կազատենք: Մենք այլ պատասխան չունենք:

Նրա ասածները թարգմանը հաղորդեց: Ասաց Յուկաննան. Թող [թագավորը] մեզ թույլ տա հեռանալ, որպեսզի մեր տիրոջը տեղյակ դարձնենք այս պատասխանին: Թագավորն ասաց. Այս գիշեր մեզ մոտ մնացեք և վաղը կգնաք և հրամայեց, որ այնինչ տեղում իջեանեն:


Դուրս եկան նրա մոտից ու գնացին այն վայրը, որ հրամայել էր: Իջևանեցին այնտեղ սպասելով, թե ինչ կանի աղջիկ Տարոնը:

Երբ [Մուհամմադի] մերձավորները նրա մոտից դուրս եկան, [թագավորը] անմիջապես հեծավ իր ձին ու գնաց [Սուրբ] Հովհաննեսի (Յուհաննա) վանքը և խորհրդակցեց իր աղջկա հետ: Ասաց նրան. Արաբները ինձ պատգամավոր են ուղարկել մի խմբի հետ միասին և ինձ այսպես այսպես ասացին, իսկ ես այսպես այսպես պատասխանեցի, ի՞նչ կարծիք ունես դու: Ասաց. Ո՛վ թագավոր, որտե՞ղ են: Ասաց. Ետ սլահեցի նրանց այս գիշեր, որպեսզի քեզ հետ խորհրդակցեմ նրանց մասին: Ասաց. Ուզում եմ տեսնել ովքեր են և ես կիմանամ հարցի էությունը: Եթե նրանք արաբների երևելիներից են, որոնց խոսքն անցնում է, ապա թույլ տուր ինձ, որ խոսեմ նրանց հետ և նրանց սիրտը փափկացնեմ [ասելով], որ դու նրանց հետ ուզում ես հաշտ լինել և այսպիսով համոզեմ նրանց: Եթե նրանք հանգստանան, ես քեզ կհրամայեմ ձերբակալել նրանց: Թող նրանք մնան քեզ մոտ, որպեսզի փրկության ելք չունենան. եթե ձերբակալես նրանց, մարդ ուղարկիր նրանց տիրոջ մոտ, որ ասի. Եթե մի ասպարեզ անգամ մեզ մոտենա, նրանց գլուխները քեզ կուղարկեմ: Երբ այս բանը լսի [նրանց հրամանատարը], չի առաջանա և

³⁰ Տպ. ումի (القوم), Ձեռ. 127 բ ժողովրդի (القوم).

³¹ Բառացիորեն՝ ցանկություն, կիրք:

³² Բառացիորեն՝ կյանքի միջոցներ:

³³  բառը, որ կա թե՛ տպ., թե՛ Ձեռ., պետք է լինի  (վրաց.) Թրգմ.

432 König von Georgien Adhragus Sohn Michaels.

հաշտություն կլինի այն պայմանով, որ դու նրա մերձավորներին կառաջարկես: Թող Քրիստոսը քեզ հաղթանակ պարգևի, քո կյանքը երկարացնի և քո վարկը բարձրացնի, իսկ նրանք հեռանան քեզանից: Սրանից ավելի հարմար կարծիք չկա:

Ասաց նրան. Ո՛վ աղջիկս, թող Քրիստոսը քո կյանքը երկարացնի և քեզ բարձրացնի, գնա նրանց մոտ, թո՛ղ այս վանքը ու մնա մեր տան (պալատի) եկեղեցում, քանզի ինչքան որ դու այստեղ ես մնում, մենք վախի մեջ ենք: Թեև քո նպատակը աղոթքով զբաղվելն է: Ուր էլ որ լինես, ապա այնտեղ քեզ աղոթարան կգտնես: Երբ այս խոսքերը լսեց, ասաց. Դուրս չեմ գա այստեղից, մինչև որ [պատրիարքը] չհրամայի ինձ այս վայրը թողնել: Թագավորը պատրիարքի³⁴ ետևից մարդ ուղարկեց և երբ սա եկավ, թագավորը նրան ընդառաջ ելավ, մեծարեց, իր կողքին նստեցրեց ու պատմեց իր աղջկա պատմությունը: Ասաց պատրիարքը. Ես քեզ թույլ եմ տալիս, որ աղոթես ուր որ կամենաս, քանզի դու քո մեղքերի քավությունը ստացել ես Քրիստոսից և նա քեզ ներել է: Իսկ նա դեմքը խաչակնքեց և համաձայնվեց: Բերեցին նրան հոր ձիերից մեկը և նա հեծավ ու գնաց այնտեղ, ուր կային ալլահի առաքյալի մերձավորները: Միայն նա մտավ այնտեղ և նրա թագավոր հայրը: Երբ տեսավ Յուկանային, ուրախացավ, հրճվեց ու ասաց. Ո՛վ տերեր, հայրս անտեղյակ է ձեր մասին և չգիտի ձեր խոսքերը և ես կպարզեմ նրան ձեր գործերը: Հավատս վկա, ես ձեզանից միայն լավություն եմ գտել, գուցե և ձեզ վարձատրեի և եթե չլինեիր ժողովրդի ու հայրենիքի սերն ու Քրիստոսի՝ կրոնը, ապա ես ձեզանից չէի հեռանա:

Նա դուրս եկավ իր հոր հետ, գնաց պալատ և ասաց նրան. Հրճվիր քեզ ուրախացնող լուրով, սրանք այդ մարդկանց երևելիներն ու տերերն են, իսկ նա, ով հոռոմի տարազ ունի, Յուկանան է, Հալեպի պատրիկը, որին Քրիստոսն իր դռնից վտարել է: Ես կարծում եմ, որ նրանց պետք է հրավիրել մեզ մոտ պալատ ու ձերբակալել այնպես, որ ոչ ոք մեր գաղտնիքը չիմանա: Հայրն ուրախացավ այս խոսքերից և ուղարկեց իր սենեկապետին [Մուհամմադի] մերձավորների մոտ և սա բերեց նրանց ու տարավ պալատի սենյակներից մեկը:

Ասել է Վակիդին. Գալիս էին նրա հոր պաշտոնյաները՝ պատրիկները և բերդերի հրամանատարները շնորհավորելու հորը աղջկա քրիստոնեական կրոնին վերադառնալու առթիվ: Ասաց Տարոնը. Լավ կլինեիր, որ ես ու դու գնայինք այդ արաբների մոտ ու նրանց հետ նստեինք, ուտեինք, որպեսզի մեր նկատմամբ վստահ լինեն և ես կասեմ նրանց, որ ուղում եմ իմ երկրի ժողովրդի ու պետության մեծամեծների հետ խորհրդակցել և կամ կհաշտվենք ձեզ հետ՝ վճարելով գլխահարկը, իսկ հակառակ դեպքում կկռվենք ձեզ հետ: Նրանց քնաբեր դեղով ճաշ կուղարկենք և եթե ուտեն ու քնաբեր դեղը ներգործի, ապա կձերբակալենք նրանց ու կաննենք ինչ որ ուղում ենք: Ես այդ բանը քեզ կբացատրեմ:

Երբ դիշերը վրա հասավ, նա իր հոր հետ գնաց նրանց մոտ: Նրանք մի ժամ զրուցեցին ու հեռացան: Երբ մյուս օրը, նստեց հայրը իր գահին և [Տարոնը] հենց որ իմացավ, թե հայրը իր գործով է զբաղված, եկավ

³⁴ Թրգմ. էջ 133 պատրիարք Ἡσυχάσιος, որի մասին տողատակում ասվում է՝ հավանաբար Chartophylax.

[Մուհամմադի] մերձավորների մոտ և ասաց նրանց. Այս գիշեր, երբ ես և հայրս գանք ձեզ մոտ, ապա զգուշացե՛ք նրանից և մի դանդաղե՛ք, որովհետև նա այսպես և այսպես որոշում է ընդունել: Շնորհակալություն հայտնեցին նրան այս բանի համար և նա գնաց:

Երբ գիշեր եղավ, եկավ իր հոր հետ և առաջ անցավ, կարծես թե ուզենալով ծածկել նրան: Նշան արեց նրանց, որ շուշանան: Նրանք զբաղեցրին [հորը] և պահեցին ու մի ժամ զրուցեցին նրա հետ: Դուրս եկան նրանց մոտից և երբ [թագավորն] իր աղջկա հետ մենակ էր, ասաց նրան. Քո այն խոսքը, թե այս արաբներին պետք է ձերբակալել, ճիշտ չէ և ես ուզում եմ իմ պատրիկներին և բերդերի ու ամրոցների վերակացուներին հավաքել ու նրանցից երդում վերցնել, որ երբեք քեզ անհավատարիմ չլինեն, այլ լինեն հնազանդ: Իսկ մեր փողերն ու գանձերը և այն ամենը, որի համար վախենում ենք, կուղարկեմ Բարկիում³⁵ ամրոցը, որովհետև դա երկրի ամենից անառիկ ամրոցներից է:

Ասել է վակիդին. Թե այս ամրոցը, որ հիշվեց, Արճեշի (Արշիշ) լճի մեջն է և ոչ ոք այնտեղ հասնելու ճանապարհ չունի:

Ասաց նրան [թագավորը]. Եթե քեզ այդ բարձր պաշտոնին նշանակեմ, բաց թող այդ արաբներին, քանզի ինձանից առաջ ոչ մի թագավոր դեսպաններին չի ձերբակալել³⁶: Կարող են նաև ասել իմ մասին, թե վախեցել եմ արաբներից: Ուստի որոշել եմ կովում հանդիպել նրանց հետ և այժմ, եթե հաղթեմ նրանց, իմ ցանկությունը կկատարվի, իսկ եթե նրանք [սկզբում] հաղթեն ինձ, ապա կան ինձ նման թագավորներ: Ահա ես մարդ եմ ուղարկել Արզան ալ-Ռումի (Արդումի) տեր Դիրաֆշիլին³⁷, որպեսզի դա զինվորներով ու զենքերով և խոստացա, որ կամուսնացնեմ նրան քո քրոջ Կարունայի³⁸ հետ, ի՞նչ ես կարծում:

Ասաց նրան. Ո՛վ թագավոր, եթե այդ բանը որոշել ես, մի թողնիր սրանց, որ գնան, մինչև որ զորքը հավաքվի և գա Դիրաֆշիլ թագավորը իր զինվորների հետ ու ոչ ոք ետ չմնա: Դրանից հետո սրանց բաց թող և եթե գնան իրենց տիրոջ մոտ, դու էլ զորքով հետապնդիր նրանց և հարձակվիր նրանց զորքի վրա: Ասաց. Աղջիկս, սխալ կլիներ, եթե մենք նրանց ձեռքից բաց թողնեինք, այլ մարդ կուղարկենք նրանց տիրոջ մոտ ասելով, որ սրանք մեզ մոտ պատվավոր վիճակում մնում են: Այժմ մենք որոշել ենք տոնական օրը մեր գործերը տեսնել: Կամ մենք հաշտություն կկնքենք ձեզ հետ գլխահարկ վճարելու պայմանով և էլամ կկռվենք, իսկ աստված հաղթանակը կտա ում որ կամենա: Նրանց կհրամայենք, որ կանգ առնեն Մարջ Բասթան³⁹ (Ոստանի դաշտ), որը ընդարձակ դաշտ է և զորքերի հանդիպման հարմար վայր: Կովի կկանգնենք նրանց դեմ, քանզի մենք նրանցից ավելի լավ ծանոթ ենք երկրին, կփակենք լեռնանցքները և նրանցից ոչ ոք չի փրկվի: Կշարժվենք դեպի Դիար Բաքր ու կգրավենք այն, կտիրենք Ռաբիա [ցեղի] հողերին և այս երկրում մեզանից բացի թագավոր չի մնա:

35 Ձեռ. 128-ր բերտիոս ج. ٢٥٠, Թրգմ. 134 Baranius. Գույե ընդ ըստն է:

36 Ձեռ. 129-ա ավելացնում է՝ և սա մեծ ամոթ է:

37 Թրգմ. 134 Derafsil ben Lawi.

38 Ձեռ. 129-ա նարունա, Թրգմ. 135 Kalun.

39 Տպ. Բասթան (بستان) Թրգմ. 135 Wastan.

Ասաց նրան Տարոնը. Արա ինչ որ ուզում ես⁴⁰, և թողեց նրան ու հեռացավ իր տեղը: Երբ իմացավ, որ հայրը դռները փակել է, եկավ [Մուհամմադի] մերձավորների մոտ և հայտնեց, ինչ որ հայրն ասել էր: Ասաց խալիփը. Ո՛վ ավաճ, հեշտացրու մեր գործը և եթե ավաճը հաջողություն կամենա, միջոցներ կպատրաստի: Ասաց Յուկաննան. Իսկ ինչպե՞ս, ո՛վ ավաճի առաքյալի բարեկամ: Ասաց խալիփը. Մեր հաղթանակը, փառք ավաճին, ապահովված է, և ամեն ինչ կարգին է: Իմացեք, որ այս մարդը որոշել է լուր ուղարկել և հավաքել իր թագավորներին ու զորքերին, որպեսզի մեր դեմ կռվի և ձիշտն այն է, որ մենք համբերենք, մինչև որ հավաքվեն: Ասաց Տարոնը. Ծիշտ բան ասացիր, ո՛վ ավաճի առաքյալի բարեկամ, ես համաձայն եմ. թող բոլորը գան ձեզ մոտ ավաճի ցանկությամբ: Հայրս ինձ իշխանություն կտա հենց եկեղեցում ամրոցների ու բերդերի տերերի ներկայությամբ և նրանցից երդում կվերցնի ինձ համար: Այս բանն անելուց հետո ավաճի ցանկությամբ դուրս կգանք նրանց դեմ: Հավանաբար նրանց մեջ կլինի նաև Արզան [ալ-Ռումի] տերը, իսկ մենք կուղարկենք [ավաճի] բարի ծառա Յուկաննային Արզան [ալ-Ռումի] տիրոջ տարազով և նա, կարծում եմ, կտիրի նրան [Արզան ալ-Ռումին] և մեր հաղթանակը ապահով կլինի: Ապա դուրս եկավ նրանց մոտից:

Ասաց Վակիդին. Պատմել է Սալիհ իբն Ումրանը [լսելով] Աբդ ալ-Ռահման իբն ալ-Հասանից [սա էլ լսելով] նրանցից, ովքեր պատմել են: Ասել են բոլորը, կամ ով որ նրանցից ասել է, որ երբ Խլաթի տեր⁴¹ թագավորը որոշեց այնպես, ինչպես ասել էինք և եղավ առաջնություն, մարդ ուղարկեց իր դործերի վերակացուի և բերդերի կառավարիչների ետևից, որ իր մոտ գան: Բոլորը եկան և ոչ ոք ետ չմնաց: Եկավ Դիրաֆշիլը Արզան [ալ-Ռումից] և զորքը նրա հետ: Իսկ նրանք հավաքվել էին իրենց մեծ տոնի գիշերներին և զարդարել էին իրենց եկեղեցին, ամեն կողմից եկել էին քահանաներն ու վանականները: Մտան եկեղեցի, դռներ մատուցեցին (մատաղ արեցին) և երբ զոհաբերությունն ու աղոթքները վերջացրին, թագավորը նստեց իր գահին, իսկ աղջիկը կանգնած էր նրա աջից:

Ասաց նա թագավորներին ու պատրիկներին. Իմացեք, որ ես ձեզ հավաքել եմ հենց առաջարկ անելու նպատակով, որը բարի է ձեր գործի, թագավորության ու կրոնի համար: Որոշել եմ իշխանությունը հանձնել թագուհի Տարոնին, որն, ինչպես գիտեք, ունի խելք, միտք, պատերազմի հնարամտություն, քաջություն ու հմտություն: Իմ մահվանից հետո նա կլինի ձեր տերը, ի՞նչ կասեք: Ամենքը վեր կացան և ողջունեցին նրան, ասելով. Հավ բան ես մտածել, ո՛վ թագավոր, գործադիր: Այն ժամանակ նա ելավ կանգնեց և վերցնելով թագն իր գլխից, Տարոնի գլխին դրեց և բռնելով նրա ձեռքից, գահին նստեցրեց, իսկ ինքը կանգնեց աջ կողմում, որպես մի սենեկապետ և ձախ կողմում կանգնեց Արզան [ալ-Ռումի] տերը: Ողջունելով նրան, իրենց ձայնը տվեցին⁴² թագավորները⁴³ և երգում տվեցին նրան, մոտեցրան քահանաներն

⁴⁰ Ձեռ. 129 ա ավելացնում է՝ ես քո հրամանի տակ եմ:

⁴¹ Թրգմ. 136 ավելացնում է անունը Nustinus.

⁴² Բառացիորեն՝ ընդունեցին նրա իշխանությունը:

⁴³ Ձեռ. 129 բ և նրա հայրը և Արզանի տերը, վանականներն ու քահանաները, բոլորը, ովքեր կային եկեղեցում:

ու վանականները և երգվեցին նրան ու խոստացան լսել նրան ու հնազանդվել: Դրանից հետո Տարոնի քրոջն ամուսնացրին Արզան [ալ-Ռումի] տիրոջ որդու հետ, ապա ելան եկեղեցուց Տարոնի ծառայության տակ դեպի թագավորի պալատը և սեղան նստեցին ու ճաշեցին: Նա պարզեցին բաշխեց նրանց ու զարդարեց քաղաքը: Իսկ նրանք քաղաքից դուրս վրաններ խփեցին ու պատրաստվեցին մահմեդականների դեմ կռվի:

Ասել է Վակիդին⁴⁴. Պատմել է ինձ Իսրաիլ իբն Իսհակը լսելով Աբու ալ-Ահվասից, ասել է լսել եմ, որ Իյադ իբն Դանմը, երբ Խալիդին ուղարկեց Հայաստանի, այսինքն Խաթաբի թագավորի մոտ և ուշացան, սկսեց անհանգստանալ: Բաղեջից շարժվեց գնաց Արզան [ալ-Ռումի] հողը, իջավ մարգագետնում և իր երեւիներին ուղարկեց Խաթաբ: Օրերով ուշանալուց հետո նրանք վերադարձան ու հայտնեցին, որ թագավորը իր աղջկան՝ Տարոնին թագավորություն է տվել, նրա գլխին թագ է դրել և թագավորները նրան երդում են տվել: Այս առթիվ թագավորությունը զարդարել են և եկել է Արզան ալ-Ռումի տերն ու իր որդուն ամուսնացրել թագուհու քրոջ հետ, իսկ մարդիկ պատրաստվում են ձեր դեմ կռվի:

Երբ Իյադը այս բանը լսեց, ասաց. Ամեն ինչ բարձրյալ և հզոր ալլահի կամքով է կատարվում, դավաճանել են մեր բարեկամներին: Ասացին մահմեդականները. Այդ ինչպե՞ս եղավ, ո՞վ ալլահի առաքյալի բարեկամ: Ասաց. Մեր բարեկամները գնացին այլ նպատակի համար, սակայն ձախորդության հանդիպեցին: Ասացին. Վստահիր ալլահին և նրան ապավինիր: Իյադը Մարջում⁴⁵ (դաշտում) մնաց տասը օր և բարեկամների համար անհանգրստանալով հիվանդացավ և մարդիկ եկան այցելության: Ասաց. Եթե ալլահը իր ծառաներին բարին կամենա, մարդկանց կուղարկի նրան այցելության: Ասել է Վակիդին. Իյադը ապաքինվեց և երբ նա հեծյալ գնում էր [Մուհամմադի] մերձավորների, երեւիների հետ, որոնք քայլում էին, նրա սիրտը տխուր էր Խալիդի և ընկերակիցների համար և ահա նրա մոտ եկավ Սալիդ իբն Զայդը, որը կանչում էր. Շտապեցե՛ք, շտապեցե՛ք, արա՛գ արա՛գ: Իյադը աճապարեց նրա մոտ ասելով. Ի՞նչ ունես, ո՞վ իբն Զայդ: Ասաց. Հասիր Խալիդին և նրա ընկերակիցներին, ընկել են անդունդների ծովը և հենց մեջտեղում են: Երբ Իյադը լսեց այս բանը, ասաց. Ինչպե՞ս: Ասաց. Երբ հայրը Տարոնին թագավորություն հանձնեց և նրան երդում տվեցին, նա հաղթեց հորը և սպանեց նրան: Ապա իր հոր անունով հրավիրեց թագավորներին և երբ եկան նրա մոտ, սպանեց նրանց: Սակայն նրա ծառաներից մեկը, իմանալով նրա գաղտնիքը, գնաց և մնացած պատրիկներին ու կառավարիչներին հայտնեց նրա արածի մասին: Նրանք զենքերը հագան և պատրաստվեցին, իսկ երեկ նա ինքը իր հոր զորքը դաշտ առաջնորդեց: Մենք էլ նրա հետ հեծանք [ձիերը] և շիմացանք, թե ինչպես մարդիկ հարձակվեցին մեզ վրա ասելով. Մի՞թե կարծում եք, թե Քրիստոսը տեղյակ չէ ձեր արածին և կամ կների ձեր մեղքերը, նա խաչով կհաղթի ձեզ: Ուղեցին մեզ բռնել, սակայն մենք ուժեղ կռիվ տվեցինք, որի մասին ոչ ոք չի լսել և երկիրը լցրեցինք նրանց սպանվածների [դիակներով]:

44 Ձեռ. 129 ր. ասել է բանասացը (ռաուի):

45 Ձեռ. 130 ա Ոստանի (Ուսսթան وسان) դաշտում:

Երբ զիշերը վրա հասավ, կոիվը վերջացավ և զորքը անջատվեց Արդան ալ-Ռումի տիրոջ հետ միասին և աղջիկ Տարոնի հետ մնացին մի քանի հոգի՝ իր և հոր ծառաներից։ Նա պարզեց նրանց ընծաներ, նվերներ, մարդ ուղարկեց հայերի մոտ ասելով նրանց. Այս բանն արել եմ խղճալով ձեզ և պաշտպանելու ձեր պատիվը, որովհետև նրանք ուզում էին բռնել այդ արաբ [պատգամավորներին] և սպանել, իսկ նրանց բարեկամները կենալն ձեզ (հալերին)։ Երբ այս բանը նրանց հայտնեց, նրանց խելոքները ասացին. Աստված վկա. նա մեզ միայն բարիք է գործել։ Նրան (Տարոնին) հինգ հազար մարդ ընդառաջեց։ Ասաց [Սաիդը]. Իսկ ես թողեցի ճակատամարտը և հեհեհեհ և անց մոտ։

Երբ Իյադը լսեց Սաիդի խոսքերը, մարդկանց հրամայեց առաջ խաղալ ու շարժվեցին սրընթաց վարդով, մինչև տեղ հասան և ահա պատերազմը բորբոքված վիճակում էր։ Իյադն ու ընկերակիցները գոռացին. Մեծ է [ալլահ-հը] և դրանից զորդացին երկիրն ու լեռները։ Հարձակվեցին նրանք ու հալիդն ու ընկերակիցները ալլահին գոհացրին իրենց կովով և այնպիսի ջարդ տվեցին, որի նմանը չի լսվել երկրի երեսին։ Այսպես մնացին մինչև որ փոշին պարզվեց և ծուխը վերացավ։ Փնտրեցին, թե ով է սպանվել և գտան, որ անապատի արաբներից հարյուր քսան հոգի էր սպանված։ Մուադ իբն Ջաբալը փնտրեց իր որդուն, բայց չգտավ և երբ գիշերը վրա հասավ, մի խումբ մահմեդականների հետ մտավ ռադմի դաշտը և նրան գտավ մահամերձ վիճակում, վերքերով ծածկված։ Նրան տեղափոխեցին իր թամբի մոտ և հայրը նստեց նրա սնարին։ Իյադի եղբայր Աբդ ալ-Ռահման իբն Ղանմը ասել է. Երբ տեսա նրան, որ իր անձն էր զոհել, արտասվեցի ու հեկեկացի։ Ասել է Մուադը. Այս արշավանքը ինձ համար ավելի սիրելի է, քան ամեն մի արշավանք, որին ես ալլահի առաքյալի հետ մասնակցել եմ։ Ապա, ասել է նրան. Որդի՛ս, դու կհանդիպես քո Տիրոջը։ Մուադինը⁴⁶ կեսօրվա [աղոթքի] էր կանչել և զորքը իր աղոթքը շարունակեց, մինչև որ նա արյամբ թրջված ձեռքերով պատանքեց նրան գրահով մեկտեղ։ Եկան մարդիկ ու գտան, որ նա արդեն թաղել է որդուն. ասացին նրան. Ալլահը քեզ ողորմի, սպասեիր, որ գալինք նրա թաղմանը։ Ասաց. Մահմեդական սովորության մեջ նման բան չկա, այլ դա [արաբական] հեթանոսական արարք է։ Մենք [այդ ժամանակ] սիրում էինք պահել մեր հանգուցյալներին, սակայն [այժմ] հրամայված է թաղել նրանց։ Երբ թաղեց նրան գերեզմանում ու վերադարձավ իր թամբի մոտ, լվաց գլուխն ու մորուքը, աչքերին ծարիր քսեց, հագավ իր պատմուճանը և եկավ Իյադի վրանը, որը նրան վերաբերվեց սիրալիր ու մեծարանքով և ամեն ինչ արեց նրան մխիթարելու համար։ Ասաց. Ողջ լինես որդիս, ասաց նրան Արդ ալ-Ռահմանը՝ և ինչ, ասաց. Լսել եմ, որ ալլահի առաքյալը ասում էր. Եթե մեռնի մարդու զավակը, որին նա թանկ էր գնահատում և սիրելի էր նրան, ապա նա կմխիթարվի և ալլահը կների նրան ու հանգուցյալին և հավիտենական բնակարանում նրան տեղ կհատկացնի և կտա սիրելիներ ավելի թանկ, քան իր սիրելիները ու կամուսնացնի նրան հուրի գեղեցկուհիների հետ։

Երբ առավոտը լուսացավ, մահմեդականները հեծան ձիերը և սրբազան պայրարի (ջիհադ) ելան, բայց ահա իրևացին ձիավորներ, առանց ղեկների։ Երբ մոտեցան, իշան ձիերից և դիմեցին հրամանատարին. Յուկանան շտա-

⁴⁶ Մզկիթի միևնույնից աղոթքի կանոնը մուլա։

պեց նրանց մոտ ու ասաց. Դուք ուզե՞ր եք: Ասացին. Մենք Արղան ալ-Ռումի տերերն ենք, իսկ սա մեր առաջնորդն է և մատնացույց արեցին մի պատկառելի արտաքինով ծերունու: Յուկաննան խոսեց նրան այլ լեզվով (հունարեն) և նա ասաց. Ալլահը ինձ վկայեց ձեր մասին. գիշերը ես որոշել էի պատերազմել, սակայն երազումս տեսա Մարիամի որդի Քրիստոսին, որը հրամայեց ինձ հետևել Մուհամմադին և ասաց. Այս արաբների մարգարեն նա է, որի մասին ես ավետել եմ: Ով որ նրանից հրաժարվի, ապա իմը չէ: Երբ Յուկաննան նրա խոսքը լսեց, բոլոր ընկերակիցների հետ իջավ ձիուց և գնացին Իյադի մոտ ու պատմեց ամեն ինչ: Վեր կացավ բոլոր մահմեդականների հետ և [Արղան ալ-Ռումի] տիրոջ ձեռքը սեղմեց և նա պատմեց նրան այն, ինչ որ Յուկաննային պատմել էր և ապա իր ընկերակիցների հետ մահմեդականություն ընդունեց: Երա համար ուրախացավ աղջիկ Տարոնը և իր քրոջը հանձնեց նրան և սա տարավ նրան Արղան ալ-Ռում: Նրանց հետ տասը մահմեդականներ ուղարկեցին, որպեսզի Արղան ալ-Ռումի [ժողովրդին] մահմեդականության հրավիրեն և [մահմեդական] կրոնի օրենքները սովորեցնեն:

Ասել է Վակիդին. Եվ հրաժեշտ տվեց Դիրաֆչիլը ալլահի առաքյալի մերձավորներին և գնաց այդ տասը հոգու հետ ու հասավ Արղան ալ-Ռում: Քաղաքի բնակիչները ուրախացան և դուրս եկան դիմավորելու: Երբ թագավորը ժողովի նստեց, կանչեց մեծամեծներին, պատմեց իր տեսածները և առաջարկեց մահմեդականություն: Նրանց մեծ մասը ընդունեց մահմեդականությունը, իսկ տասը [մահմեդականները] սկսեցին սովորեցնել նրանց օրենքները և Ղուրանը:

Այն բոլոր ամրոցներն ու բերդերը, որոնք խլաթի [թագավորությանն] էին պատկանում, հանձնվեցին⁴⁷ մահմեդականներին, դրանց [բնակիչներից] ոմանք ընդունեցին մահմեդականությունը, իսկ ոմանք էլ համաձայնվեցին⁴⁸ գլխահարկ վճարել հենց եկող տարուց: Իյադը մարդ ուղարկեց խոյ և Սալմաստ և այդ երկրից այն կողմ ու նրանց ժողովուրդը մահմեդականացավ, բացի մի փոքր մասից: Մահմեդականների ուղարկեց, որպեսզի շարիաթական օրենքները սովորեցնեն, իսկ Տարոնի [իշխանությունը] հաստատեց խլաթի վրա:

Աբգնի, Սվերդի և Ջաբալ Մարունի նվաճման մասին

Ասել է Վակիդին. Ինձ ասել է Աբգալլահ իբն Ուկայլ ալ-Ջադին [լսելով] Աբու Իսհակ ալ-Համադանից: Սրանք բոլորը միասին կամ մեկը կամ էլ նրանցից ոմանք ասել են, որ երբ ալլահը Ռաբիա երկրից հետո մահմեդականների համար Իյադ իբն Ղանմի ձեռքով նվաճեց Դիար Բաքրը և Հայաստանն ու խլաթը, մարդ ուղարկվեց պստանի Բակուրի ետևից Քաֆր Տուտա և երբ սա եկավ, Հայաստանի ու խլաթի իշխանությունը նրան ու կնոջը՝ Տարոնին հանձնվեց: Նրանց հետ պայման կապվեց ալլահի անունով, որ մարդկանց հետ արդարությունը վարվեն, շարիաթական օրենքներին հետևեն և կառավարեն ալլահի ու նրա մարգարեի հրամանների համաձայն: Նրանք ըն-

⁴⁷ Թրդմ. 142 Տարոնը հանձնեց:

⁴⁸ Ձեռ. 131 ա ավելացնում է՝ մնալով իրենց կրոնին:

դուներցին: Իյադը մեկնեց Հայաստանի հողից այն բանից հետո, երբ ուղարկել էր ավաճի առաքյալի մառւա⁴⁹ Ակլային հարյուր հոգով իրաքի երկիրը, որպեսզի նրա ժողովրդին մահմեդականության հրավիրի և ինքը խոստացավ նրանց այնտեղ միանալ: Նրանք մեկնեցին նամակով մեկտեղ, իսկ Իյադը՝ գնաց իր ճանապարհով, մինչև որ հասավ Արղան ալ-Ռում, իսկ այնտեղից Սղերդ և Զաբալ Մարուն:

СКАЗАНИЕ О ДЕВИЦЕ ТАРОН В АРАБСКОМ ИСТОЧНИКЕ XII ВЕКА

Доктор историч. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

Армянский народный эпос «Сасна црер» («Сасунские безумцы», или «Давид Сасунский»), в основном сложившийся в IX—XIII веках, впервые был записан лишь в XIX веке. В последние годы стали известны краткие упоминания о героях эпоса в иноязычных записях XVI в. Между тем в арабском историческом сочинении Псевдо-Вакиди (XII в.) о завоевании верхней Месопотамии наличествует подробный рассказ о завоевании Армении арабами, который является откликом одной из частей армянского эпоса. В этом рассказе, публикуемом нами в армянском переводе, фигурируют Муш (Мушег) — сын владельца Сасуна Санасара, Тарон — дочь царя Армении, и др.

⁴⁹ Այսպես է կոչվում օտար ժողովուրդներից վերցված ստրուկը ազատագրվելուց հետո: